

ԱՄԵՐԻԿԱՑԻ  
 ԴԻԲԱՆԱԳԵՏՆԵՐՈՒ  
 ԳՆԱՀԱՏՄԱՍԲ  
 ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ  
 ԸՆԹԱՑՔԻՆ ԵՂԱԾ ԵՆ  
 ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

## ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԾ ԲՈԼՈՐ ՉՈՐՍ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ՏԱՐԻՆ ՓԱՅԼՈՒՆ ՅԱՂԹԱՆԱԿ ԼԻԲԱՆԱՆՑԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵՑ ԻՐ ՎԱՍԱՀՈՒԹԻՒՆԸ «ՄԱՐՏ 14-Ի» ՈՒԺԵՐՈՒՆ

Հայաստան այցելող Ամերիկացի բարձրաստիճան դիւանագետ Ֆրիլիփ Կորտըն, Վերջերս տեղի ունեցած Երեւանի քաղաքապետական ընտրութիւններու կապակցութեան յայտարարեց, որ ինք տեղեկացած է ընտրախախտումներու եւ ընտրութիւններու ընթացքում տեղ գտած խնդիրներու մասին:

«Այդ ամէնը չի համապատասխանէր այն չափանիշներուն, որը մենք կ'ուզէինք տեսնել», - մամուլը ասուլիսի մը ընթացքին ըսաւ Ֆրիլիփ Կորտըն: Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղարի տեղակալը նաեւ յայտնեց, որ ցաւալի կը նկատէ Երեւանի աւագանիներու խորհուրդը պոչթութելու՝ ընդդիմադիր Հայ Ազգային Գոնկրէսի որոշումը:

«Գիտեմ, որ ընդդիմութեան որոշ ներկայացուցիչներ ընտրուած էին, սակայն որոշած են հրաժարիլ մանտաթներէ, ինչ որ ցաւալի է, քանի որ նոյնիսկ անկատար ընտրութիւններու պարագային նախընտրելի է, որ ժողովուրդի քուէն ստացողները ծառայեն ժողովուրդին», - ըսաւ Կորտըն:

Շաբ.ը էջ 4

Կիրակի, Յունիս 7-ին կայացան Լիբանանի խորհրդարանական ընտրութիւնները, որոնք աւարտեցան երկրի անկախութեան կողմնակից ուժերու՝ «Մարտ 14-ի» համախմբումի յաղթանակով, պարտութեան մատնելէ ետք «Մարտ 8-ի» շարժումը, որ կը գլխաւորէր Իրանի կողմնակից «Հըզպ Ալլա» կուսակցութիւնը:

«Մարտ 14-ի» ուժերը տիրացան Լիբանանի խորհրդարանի 128 տեղերէն 70-ին, պահպանելով իրենց նախկին մեծամասնութիւնը:

Հայկական կուսակցութիւնները եւս բաժնուած էին այս երկու ճակատներուն միջեւ: Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան եւ Ռամկավար Ազատական կուսակցութիւնները մաս կը կազմէին «Մարտ 14-ի» շարժումին, իսկ ՀՅ Դաշնակցութիւնը՝ «Մարտ 8-ի» ուժերուն:

Ամէնուրէջ Հնչակեան կուսակցութեան պաշտպանած թեկնածուները տարին փայլուն յաղթանակներ: Արդարեւ, Մայրաքաղաք Պէյրութի առաջին ընտրաշրջանի հինգ ատեններէն հինգն ալ ձեռք ձգեցին «Մարտ 14-ի» ուժերը, աւելի քան 3 հազար



Հնչակեան Կուսակցութեան յաղթական երեսփոխան Սերժ Թուրսարգիսեան ուսանաբարձ կը դիմաւորուի Պէյրութի Հանրն թաղամասէն ներս

ձայնի առաւելութեամբ: Այս ընտրաշրջանէն ներս հայկական երկու ատեններուն համար մղուող պայքարի ընթացքին Հնչակեան թեկնածու Սերժ Թուրսարգիսեան պարտութեան մատնեց դաշնակցա-

կան Կրէկուար Գալուսթին, իսկ Ռամկավար կուսակցութեան կողմէ առաջադրուած Ժան Օղասապեան յաղթեց դաշնակցական Վրէժ Սա-

Շաբ.ը էջ 4

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ 20 ՌԱՀՎԻՐԱՆԵՐՈՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ 94-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

Մեր բազմադարեան պատմութեան էջերուն արձանագրուած՝ մեծ է եղած մեր ազգի պարճանկ պատմառող հերոսական մարտնչումներուն, յաղթանակներուն եւ գանձոյն իրենց կեանքի գնով յաւերժացուցած անգուգական փառքերուն թիւը: Մարտնչումները միում եւ մեր ազգի գոյութեան եւ հայրենիքի պահպանման ի խնդիր: Մեր փառքերը գոհուած են այդ իտէալի նամբուն: Մտորհիւ անոնց, պահեցիմագր: Տէր կանուխեցան հայրենիքի: Պաշտպանեցիմ մեր ազգային արժանապատուութիւնը: Կերտեցիմ մշակոյթ: Յոյս ու կորով ջամբեցիմ յաջորդող սերունդներուն: Հաւատացիմ մեր լինելիութեան, անտեսելով մեզի վիճակուած ամէն ցաւ, գրկանքի կորուստ: Հնչակեան 20 նահատակները, իրենց կեանքով, իտէալով, պայքարով եւ հաւաքական նահատակութեամբ՝ հարազատ խորհրդանիշը դարձան յանուն ազգի, հայրենիքի լուսաշող ապագայի կերտման ազատագրական պայքարի: Մեր ժողովուրդը պիտի չի մոռնայ մեր հերոսական անցեալը եւ անոր ռահվիրաները:

Հնչակեան 20-ները առաջնորդուեցան հերոսական նոյն նախապարհով: Հայր արհամարհուած, ննչուած, անիրաւուած եւ հալածուած էր ամէնուրեք, Օսմանեան կայսրութեան սահմաններէն ներս: Չունէր կեանքի, ինչքի եւ իրաւական կարգի դոյզն ապահովութիւն: 20-ները բարեխաւով համար իրենց ժողովուրդի վիճակը, առաջադրեցին ինքնավար հայրենիքի մը ապահովումը: Մինչ զարգացաւ նոր կացութիւն:

Անոնք վկաները հանդիսացան Օսմանեան համաթուրանական աւագանիին կողմէ նիւթուող հայաջինջ ծրագիրներուն: Այդ կը բացայայտէր 1911 թուի, Սելանիկի մէջ, երիտ. թուրքերու կողմէ ամրագրուած ընդատակեայ որոշումը, որ ուրիշ բան չէր եթէ ոչ հայոց դէմկատարուելիք ճեղատապանութիւնը:

20-ներու կուսակցութիւնը որոշեց, շուտով պատուհասել այն ցեղասպան ճեղքերը, որոնք պիտի հնձէին ամբողջ ազգի մը կեանքը: Քէօստէնէն, Հնչակեան 7-րդ նուիրական համագումարով, եկաւ

Շաբ.ը էջ 18

## ՀԱՄԱԳԱՐՈՒԹԱՅԻՆ ՀՐԱԺԵՇՏ ԸՆԿ. ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԵԱՆԻ



«Մասիս»ի տարեգրութեան ամենատիրուր օրերէն մին պիտի հանդիսանայ Յունիսի 4, 2009: Արդարեւ, այդ օր՝ աւելի քան 800 հոգի, եկած էին Հոլիվուտի Ֆորեսթ Լոն գերեզմանատունը իրենց վերջին հրաժեշտը տալու, թերթիս հիմնադիրներէն եւ առաջին խմբագիր՝ Տօքթ. Յարութիւն Սաղբանին:

Կէսօրուան ժամը ճիշդ 12-ն է...: Կարմիր եկեղեցիին մէջ կոմիտասի անուան լարագային քառեակի տիւրը մեղեդիներու հնչիւնին

ներքեւ, մահաբեմին վրայ Հնչակեակ դրօշով ծածկուած եւ ծաղկեպսակներով շրջապատուած դագաղին մէջ իր յաւիտենական հանգիստը գտած էր վաստակաշատ ընկերը:

Բազմահարիւր սգակիրներու մէջ կը նշմարուէին Կլենտէյլի քաղաքապետ Ֆրէնք Գինթերոն, նախկին քաղաքապետներ Լարի Զարեան, եւ Ռաֆֆի Մանուկեան, Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան եւ

Շաբ.ը էջ 19

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

«ՊԱՂՈՒԹՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆՆԵՐՆ ԱԻԵԼԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՆ, ՔԱՆ ՈՌԲԵՐՂ ԲՈՉԱՐԵԱՆՆ ՈՒ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ»

Օրերս հանրութիւնը կրկին անգամ համոզուեց, թէ ովքեր են Սերժ Սարգսեանի աննկուն յենարանները: Սօս Սարգսեանը, վազդէն Մանուկեանը, Արշակ Սաղոեանը, Կարէն Բեքարեանը, Խոսրով Յարութիւնեանը եւ էլի մի քանիսը տեսախցիկների առջեւ լուրջ դէմքերով քննարկում էին Մարտի 1-ից յետոյ Լեւոն Տէր-Պետրոսեանի, կալանաւորուած համախոհներին համաներել-չհամաներելու հարցը: Այս պարոններին հաւանաբար թւում է, թէ արդի փուլում իրենց գլխաւոր անելիքը քաղբանտարկեալների նկատմամբ հրահանգաւորուած «հումանիզմ» դրսեւորելն է: Մինչդեռ ակնյայտ է, որ եթէ չլինէր համաներման հարցը, ապա վազդէն Մանուկեանը, Արշակ Սաղոեանը, Խոսրով Յարութիւնեանը եւ Սօս Սարգսեանը մէկ անգամ եւս իրենց մասին չիչեցնելու առիթ չէին ունենայ, իսկ ասեմք, Կարէն Բեքարեանն էլ Հանրային խորհրդում ընդգրկուելու փոխարէն կը բաւարարուէր սոսկ եւրոպայներին ինտեգրուելու մասին երկարաշունչ ու սնամէջ շաղակրատանքներով եւ խիստ եկամտաբեր այդ գործի համար ստացած դրամաշնորհները մսխելով: Ինչպէ՞ս են վերաբերում քաղբանտարկեալները Սերժ Սարգսեանի եւ նրա ձեռնասուն ՀԽ-ի այսօրինակ «ողորմածութեանը»:

«Ամօթ են այդ մայմունութիւնները, կապիկութիւնները, Սօս Սարգսեանի կնքահայրութեամբ օլինբազուութիւնները, որոնք ցուցադրում են հեռուստաընկերութիւններով: Սերժ Սարգսեանը նախագահ էր ընտրուել, չի էլ լինելու, դրա համար է դիմել «հանրային» կոչուող խորհրդին: Ես մերժում եմ Սերժ Սարգսեանի ղեկավարած բոլոր կառույցները, չեմ ներկայացել վաղաժամկէտ պայմանական ազատման յանձնաժողովի նիստերին: Նրանք ովքե՞ր են, որ որոշեն քաղբանտարկեալների համաներման հարցը: Գաղտնիք չէ, որ Սերժ Սարգսեանն այդ քայլերին դիմում է Եւրոպայի խորհրդի ճնշման ազդեցութեամբ, եւ այդ ամէնը մեզ համար արժէք չունի: Եթէ Ռոբերդ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի ձեռքին ճար լինէր, նրանք քաղբանտարկեալներից շատերի հարցը կը լուծէին հենց գաղութներում: Գաղութներում գտնուող քրէականներն աւելի բարոյական են, քան Ռոբերդ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը, քանի որ նրանք քաղբանտարկեալներին յարգանքով են վերաբերում: Իսկ Մայիսի 31-ին Սերժ Սարգսեանն իր բանդայի հետ միասին կարդաց մեր պետականութեան մահախօսականը», - իր

կարծիքը թերթին փոխանցեց քաղբանտարկեալ, «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցութեան նախագահ Պետրոս Մակեանը: ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի Յունիսի 1-ի հանրահաւաքում ունեցած ելոյթից էլ պարոն Մակեանը եկել է այն համոզման, որ Լեւոն Տէր-Պետրոսեանը ստիպուած է առաջ քաշել Սերժ Սարգսեանի հրաժարականի հարցը, քանի որ նախկինում առաջ քաշած կոնցեպցիաները չկատարուեցին:

«Ես միշտ կողմ եմ եղել կտրուկ քայլերի երկու ուղուրպատրոնների նկատմամբ եւ կարծում եմ, որ նրանց հետ կամուրջները վերջնականապէս այրուել են», - ասաց Պետրոս Մակեանը: Քաղբանտարկեալ Յարութիւն Ուռուտեանն էլ նշում է, որ իրենք չեն ընդունում այսօրուայ իշխանութիւնների ոչ մի որոշում, որովհետեւ Սերժ Սարգսեանին չեն ընդունում որպէս նախագահ: Ուստի, ըստ Ուռուտեանի, որոշել են, որ բանտերից դուրս չեն գա իշխանութիւնների համաներմամբ:

Քաղբանտարկեալ Ժորա Սափեանը չի ակնկալում, որ կարող է համաներում լինել:

«Ով ասես խօսում է համաներումից, բայց լուրջ բան չկայ: Սերժ Սարգսեանի համաներման մասին յայտարարեց ԱԺ նախագահի աթոռը զբաղեցնող անձը, իրեն դնելով «լաւ տղու տեղ»: Դրանից յետոյ ՀՀԿ-ն կա՞մ պէտք է պատժեր Հովիկ Աբրահամեանին նման քստմնելի մտքեր արտայայտելու համար, կա՞մ էլ պէտք է յայտարարի, որ դա ՀՀԿ-ի պաշտօնական տեսակէտն է, եւ կուսակցութիւնը, ի դէմս Սերժ Սարգսեանի, այդպէս է մտածում: Եթէ երկրի երկրորդ դէմքը մի բան է ասում, որը յետոյ հերքում է, ապա ողբամ էս երկրին»:

«Սերժ Սարգսեանը քաղբանտարկեալներին պահելու է մինչեւ վերջին վայրկեանը, որքան հնարաւոր է պահել: Եւ եթէ հիմա էլ նա «հանրային խորհուրդ» կոչուածի եւ քաղբանտարկեալների միջոցով կարողանայ համոզել ներկայացում բեմադրել Եւրոպայի խորհրդի չիմովնիկներին համար, ապա քաղբանտարկեալների ազատման հարցը նորից կը ձգձգուի մինչեւ ԵՄԽՎ աշխանային նստաշրջում: Իսկ մենք, կոփուած քաղբանտարկեալներս, թքած ունենք այդ ներկայացումների վրայ», - «համաներողներին» այսպէս պատասխանեց քաղբանտարկեալ, Լեւոն Տէր-Պետրոսեանի նախընտրական շտաբի անդամ Դաւիթ Մաթեւոսեանը:

ԹԱԳՈՒՀԻ ՅԱԿՈՒԲԵԱՆ «ՏԱՐԵԳԻՐ»

ՍԱ ԵՐԵՒԱՆ Է, ԱՅՍԵՂ ԴՈՒ ՏԱՆՆ ԵՍ

Իսկ դուք երբեք մտածէ՞լ էք, թէ ինչ արդիւնքներ կը գրանցուէին, եթէ համակենտրոնացման ճամբարներում անցկացուէին «ազատ, արդար եւ եւրոպական չափանիշներին համապատասխանող ընտրութիւններ»: Թեկնածուներից մէկը լինէր Ադոլֆ Հիտլերը, միւսը՝ Ուինսթոն Չերչիլը, թեկնածու լինէին նաեւ Շառլ դը Գոլը, Ֆրանկլին Դելանօ Ռուզուելտը: Մտածէք այս մասին, այս մասին թող մտածեն նաեւ այն մեկնաբան-լրագրողները, ովքեր լուրջ վերլուծութիւններին են ենթարկում Երեւանի քաղաքապետի ընտրութիւնների պաշտօնական արդիւնքները: Նրանք ուզում են այդ արդիւնքների վերլուծութեամբ ինչ-որ բնականոն քաղաքական եզրակացութիւնների հանգել, սոկոսներ գումարել-բաժանել: Այսպէս վարում են յատկապէս այն լրագրող-վերլուծաբանները, ովքեր ընտրութիւնների օրը բռնութիւնների չեն ենթարկուել կամ էլ սեփական աչքերով չեն տեսել բռնութիւնների պատճառները: Նրանց գրած նիւթերից հաստատ երեւում է, որ իրենք մտածում են, թէ այդ իրենց խելօքութեան պատճառով քացուտակ չեն յայտնուել: Իհարկէ, շատերը սա կարող են իրօք «խելացիութիւն» համարել, բայց այս մասին, թերեւս, ոչ ոք աւելի դիպուկ չի արտայայտուել, քան աւագանու ընտրութիւններում ՀՅԴ համամասնական ցուցակում յայտնուած երգահան Ռուբէն Հախվերդեանը. «Եղիւր հեզ, բանող եզ, որոճայ քեզ բաժին ընկած խոտը, մինչեւ կը բացուի առաւօտը»: Ուզում էք հաւատացէք, ուզում էք՝ ոչ, բայց ահաւոր ցաւ գզացի, երբ պարզուեց, որ ՀՅԴ-ն «Օրինաց երկրից» քիչ «ձայն է հաւաքել» եւ չի յաղթահարել եօթ տոկոսանոց արգելանքը: Այդ զգացողութեան համար բազմաթիւ պատճառներ կան՝ քաղաքական պատճառներ: Բայց դրանցից ամենակարեւորը, թերեւս, ենթագիտակցական, հոգեբանական է: ՀՅԴ-ն իր նախընտրական քարոզարշաւի համար կարգախօս էր ընտրել նոյն Ռուբէն Հախվերդեանի չքնաղ երգի՝ «Սա Երեւանն է, այստեղ դու տանն ես» սողը: Հիմա ակամայ ուզում ես հարցական նշաններ դնել այդ կարգախօսի վրայ՝ սա Երեւանն է, այստեղ դու տանն ես: Եւ ահա, այս հարցական նշանները ստիպեցին մտածել համակենտրոնացման ճամբարի եւ նրանում անցկացուելիք «ազատ, արդար, եւրոպական չափանիշներով» ընտրութիւնների պոտենցիալ արդիւնքների մասին: Չէ, չեմ ուզում ասել, թէ Երեւանը վեր է ածուել համակենտրոնացման ճամբարի: Բայց դա՞ միայն այն տասնեակ հազարաւոր մարդկանց շնորհիւ, ովքեր մերժել են հեզ եզի կարգավիճակը, ովքեր հրաժարուել են նախիրի նման ընտրատեղամասեր քշուողի կարգավիճակից: Եւ եթէ այս մարդկանց որեւէ բան պատահի, Երեւանի ճակատին անհրաժեշտ կը լինի գրել ոչ թէ՛ «Սա Երեւանն է, այստեղ դու տանն ես», այլ՝ «Եղիւր հեզ, բանող եզ, որոճայ քեզ բաժին ընկած խոտը, մինչեւ կը բացուի առաւօտը»: Բայց էն էլ եմ ուզում նշել, որ մենք բոլորս այնքան էլ արդար չենք վարում, երբ ուզում ենք անարգանքի սիւնին գամել «ընտրական նախիրում» ընդգրկուածներին: Մի՞թէ որեւէ մէկը իրօք կարող էր զատապարտել համակենտրոնաց-

ման ճամբարի այն գերեալին, որը քուէարկում է Ադոլֆ Հիտլերի կամ էլ Գերման Գերինգի օգտին: Ինչո՞վ է տարբերում թաղային «ընտրական էլիտայի մամլիչի տակ ընկած քաղաքացին համակենտրոնացման ճամբարում յայտնուածից: Դուք ուզում էք ասել, որ այսօր Հայաստանում ապրող քաղաքացին աւելի շատ իրաւունք ունի, քան համակենտրոնացման ճամբարի բնակիչը: Չէ լուրջ, դուք կարո՞ղ էք նման բան ասել: Եթէ ինչ-որ տարբերութիւններ կան, դրանք ընդամէնը ֆորմալ տարբերութիւններ են. նախ՝ մենք գտնուում ենք 21-րդ դարում, եւ յետոյ՝ Երեւանն ու Հայաստանը, այնուամենայնիւ, աւելի ճիշդ՝ դեժուրէ համակենտրոնացման ճամբար չեն, այլ Սահմանադրութիւն ունեցող պետութիւն, եւ քաղաքացիներն էլ դեժուրէ գերի չեն, այլ բարձրագոյն իշխանութիւն: Դեժուրէ, ընդամէնը՝ դեժուրէ: Ու քանի որ այսօրուայ նիւթի առանցքը Ռուբէն Հախվերդեանի երգերն են, աւարտենք եւս մէկ մէջբերումով. «Ո՞ւր է անգլուխը, քաղաքագլուխը, որ ու... վրայ ունի ծալքեր...»:

Յ. Գ. Յոյս ու մեմ՝ Ռուբէն Հախվերդեանը չի սրտնեղի, եթէ, այնուամենայնիւ, վերջին մէջբերման իրաւունքը վերապահեմՄիտր Մանուկեանի գրած երգի մի հատուածի. «Ձեռնամեքի երախու մախառում է շուկը մեր/Մեր ձայնը չի շղթայուի, մեր երգը չի մահաւայ/Ազատութեան փողոցում մարտիկներ կան աներեր/ «Պայլար, պայլար միջնու վերջ»». «Հի-մա, հի-մա, հի-մա»:

ՆԻԿՈՒ ՓԱՇՏԵԱՆ «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

**ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹ-ԱԹԵՐԹ**  
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի  
  
ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱՁԱՆՃԵԱՆ  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
ԳԱՐԻԷԼ ՍՈՒՆՅԵԱՆ  
ՍԱՅԱՍՈՒԹԵԱՆ  
ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ  
  
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
Դեռ. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
  
MASSIS Weekly  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104

**ՔԱԶ ՆԱԶԱՐ**  
**ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**  
Ամէն Կիրակի երեկոյեան  
ժամը 10:00-ից 12:30  
Կլէնտոնի 280-րդ կայանից



ԼՈՒՐԵՐ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՏՐԱՍ Է ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԲԱՆԱԿՑԵԼ ՄԱԴՐԻԴԵԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՀԻՄԱՆ ԿՐԱՅ»

«TERT.AM»: Նախագահի մամուլի ծառայությունը տեղեկացնում է, որ Սերժ Սարգսյանն Յունիս 9-ին ընդունել է աշխատանքային այցով Հայաստան ժամանած ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ֆիլիպ Գորդոնին:



Սերժ Սարգսյանը և ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ֆիլիպ Գորդոնը

Երկրի ղեկավարը շնորհավորել է Միացեալ Նահանգների վարչակազմի նորանշանակ պաշտօնակցին և նշել, որ նրա այցը լավ առիթ է խօսելու հայ-ամերիկեան յարաբերությունների ներկայ վիճակի ու զարգացման հեռանկարի մասին: Նախագահ Սարգսյանի խօսքով՝ Հայաստանը չափազանց կարեւորում է Միացեալ Նահանգների հետ յարաբերությունների խորացումը և բարձր է գնահատում մեր երկրի տնտեսության զարգացման, ժողովրդավարության ամրապնդման, տարածաշրջանում կայունության ապահովման ուղղությունները:

Պետքարտուղարի տեղակալ Ֆիլիպ Գորդոնը նշել է, որ երկրորդ շաբաթն է ինչ ստանձնել է պաշտօնը, և իր առաջին արտասահմանեան ուղեգրությունը սկսում է Հայաստանից: Նա ասել է, որ ամերիկեան կողմը կարեւորում է Հայաստանի հետ համագործակցության ընդլայնումը, ինչպես նաև մեծ ուշադրություն է հետևում է տարածաշրջանային զարգացումներին:

Սերժ Սարգսյանը և պետքարտուղարի տեղակալ Գորդոնը հանգամանալի զրոյց են ունեցել

հայ-թուրքական յարաբերությունների կարգաւորման գործընթացի վերաբերեալ: Նշելով, որ սա պատմական հնարաւորութիւն է, և հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումը բխում է թէ՛ Հայաստանի, թէ՛ թուրքիայի և թէ՛ տարածաշրջանի շահերից, ԱՄՆ պետքարտուղարի տեղակալը վերահաստատել է այդ ուղղութեամբ ձեռնարկուող քայլերին Միացեալ Նահանգների վարչակազմի անվերապահ աջակցութիւնը:

Կողմերը մտքեր են փոխանակել նաև Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգաւորման վերաբերեալ: Սերժ Սարգսյանը հակիրճ ներկայացրել է խնդրի պատմութիւնը և պաշտօնական երեւանի դիրքորոշումը: Հանրապետութեան նախագահը մէկ անգամ ևս շեշտել է, որ մեր երկրը հաւատարիմ է հակամարտութեան խաղաղ կարգաւորմանը և պատրաստ է մագրիդեան առաջարկությունների հիման վրայ շարունակել բանակցել:

Հանդիպմանն անդրադարձ է եղել նաև «Հազարամեակի մարտահրաւէրներ» ծրագրի հետ կապուած հարցերին:

ՈՐ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Հայաստանի և Ադրբեյջանի նախագահների Յունիս 5-ի հանդիպումից յետոյ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն հանդէս են եկել յայտարարութեամբ:

Համանախագահների գնահատմամբ՝ երկու նախագահների հանդիպումը անցել է կառուցողական մթնոլորտում և դրական առաջընթաց է գրանցուել՝ նեղացնելով այն տարբերությունները, որոնք առկայ են ԼՂ հիմնախնդրի լուծման հիմնարար սկզբունքներում:

Երկու նախագահներն առաջարկել են միջնորդներին շարունակել իրենց առաքելութիւնը և առաջարկներ ներկայացնել՝ Մադրիդեան սկզբունքներին համահունչ:

Բացի այդ Սերժ Սարգսյանն ու Ալիևը համաձայնել են շարունակել իրենց հանդիպումները, և, ամենայն հաւանականութեամբ, յաջորդ հանդիպումը կը կայանայ Յուլիսին:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԻՆ ԵՂԱԾ ԵՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Շարունակուած էջ 1-էն

«Կը կարծեմ, որ այս մասին աւելին կրնանք ըսել, երբ պատրաստ կ'ըլլայ վերջնական գնահատականը, իսկ առայժմ, ըստ իմ նախնական գնահատականի, ընտրութիւններու ընթացքին խնդիրներ եղած են», - աւելցուց Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղարի Եւրոպայի և Եւրասիայի հարցերով տեղակալը:

Մայիս 31-ի ընտրութիւններու վերաբերեալ հարցին պատասխանեց նաև Հայաստանի մօտ Միացեալ Նահանգներու ղեսպան Մարի Եովանովիչ, որ անձամբ հետեւած էր ընտրութիւններուն՝ Երե-

ւանի մի քանի տեղամասերէն ներս: «Դեպքանատուներ ունէր իր դիտորդները ինչպէս տեղամասերու մէջ, այնպէս ալ տեղամասերէն դուրս՝ փողոցներու վրայ: Մենք ականատեսն եղած ենք ընտրակեղծիքներու, խախտումներու և անհրաժեշտութեան մի շարք փաստերու, նոյնիսկ՝ ոչ-թէ մէկ կամ երկու ընտրատարածքներու մէջ, այլ ամբողջ քաղաքով, ինչպէս քուէարկութեան, այնպէս ալ ձայներու հաշուարկի ժամանակ», - յայտարարեց ղեսպան Եովանովիչ, իր հերթին շեշտելով, թէ Միացեալ Նահանգներու պաշտօնական գնահատականը կը ներկայացուի յառաջիկայ օրերուն:

ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ՅԱՂՈՒԿԱՆ

Շարունակուած էջ 1-էն

պունճեանին: Պէյրութի երկրորդ ընտրաշրջանէն ներս, նախապէս գոյացած համաձայնութեամբ մը, Հնչակեան Սեպուհ Գալփագեան և դաշնակցական Արթուր Նազարեան յաղթական հռչակուեցան՝ մրցակիցներ չունենալու պատճառաւ:

Նոյնպէս, Մէլիքի շրջանին մէջ, որ կ'ընդգրկէր Պուրճ Համուտի հայկական թաղամասերը, դաշնակցական Յակոբ Բագրատունեան միակ թեկնածուն ըլլալով, հռչակուեցաւ յաղթական:

Ջահէի ընտրաշրջանէն ներս, որ կ'ընդգրկէր հայկական Անճար

մակիրներ և բարեկամներ փութացած էին մեր կեդրոնները, իրենց կամաւոր մասնակցութիւնը բերելու ընտրական գործընթացին: Առաւօտեան ժամը 7:00-ին արդէն, մեր կեդրոնները պատրաստ էին ընդունելու քուէարկողները, որոնց ընտրական վիճակը ստուգելէ ետք, անոնց ինքնաշարժներով ընկերակցողներ կ'ըլլային դէպի ընտրական տեղամասեր: Ինչպէս նաև հեռաձայնով կը կապուէին քուէարկողներուն բնակարանները, քուէարկողներուն ցուցմունքներ տալու և առաջնորդելու համար դէպի ընտրութեան վայրերը: Կիրակի ամբողջ օրը և մինչև երեկոյեան յառաջացեալ ժա-



Տեսարան մը Հնչակեան Կուսակցութեան կեդրոններէն մերս ընթացող ընտրական աշխատանքներէն

ւանը, դարձեալ յաղթական դուրս եկան «Մարտ 14-ի» ուժերը, իսկ հայկական միակ աթոռին համար մղուող պայքարի ընթացքի Հնչակեան կուսակցութեան գորակցութիւնը վայելող Նշան Չինչինեան պարտութեան մատնեց այժմու խորհրդարանի անդամ դաշնակցական ճորճ Քասարճիին:

Այսպիսով, Լիբանանի խորհրդարանէն ներս հայութեան յատկացուած 6 աթոռներէն երկուքը՝ բաժին ինկան Հնչակեան կուսակցութեան, երկուքը՝ դաշնակցութեան, մէկը՝ Ռամկավար կուսակցութեան, իսկ մէկը՝ անկուսակցական Նշան Չինչինեանին:

Օրուայ ուշ ժամերուն արդիւնքները յայտարարուելէ ետք, հայ երիտասարդութիւնը սկսաւ համախմբուիլ Հաճըն թաղամասին Ս. Գէորգ Եկեղեցու շրջակայքը, ուր ուսանբարձ դիմաւորութեան յաղթական թեկնածուները: Տեղի ունեցած տօնախմբութիւնները շարունակուեցան մինչև և առաւօտեան կանուխ ժամերը:

ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՒԹԻՒՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿԵԴՐՈՆՆԵՐԵՆ ՆԵՐՍ

Կիրակի առաւօտեան կանուխ ժամերէն սկսեալ Լիբանանի տարբեր շրջաններու մէջ գործող Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան կեդրոնատեղիներուն մէջ և անոր հովանաւորութիւնը վայելող այլ ակումբներուն մէջ կը տիրէր աշխույժ և աչքառու գործունէութիւն և եռուզեռ, յիշեցնելով մեղուի փեթակները:

Արդարեւ, ղեկավար թէ շարքային ընկերներ, ակումբներու և մասնաձիւղերու պատասխանատուներ, սկաւտներ, արենոյններ, հա-

մերը, եռուզեռ անպակաս եղաւ Ս.Գ.Հ.Կ.-ի Հաճնոյ կեդրոնին, Հ.Մ.Մ. Պէյրութի, Պուրճ Համուտի Մասիս ակումբին, Հ.Մ.Մ. Թոմարոզ, Հ.Մ.Մ. Ճիւնի և Հ.Մ.Մ. Անթիլիասի մասնաձիւղերուն մէջ: Այդ կեդրոններուն մէջ քուէարկող քաղաքացիներու կողքին, ընդունուեցան նաև ընտրութեանց թեկնածուներ, որոնք տեսնելով կեդրոններուն մէջ տարուող աշխատանքը, ըստ արժանուոյն գնահատեցին անոնց գործունէութիւնը:

Երեկոյեան ժամը 7:00-ին քուէատուփերը փակուելէ ետք, մեր կեդրոններուն մէջ աշխատանքը շարունակուեցաւ մինչև կէս գիշեր և աւելի ետք, երբ անպաշտօն ձեւով յայտարարուեցան ընտրութեանց ոչվերջնական արդիւնքները:

Ի տես Ս.Գ.Հ.Կ.-ի կողմէ և ՌԱԿ-ի կողմէ Պէյրութի առաջին ընտրաշրջանին մէջ առաջադրուած թեկնածուներ, պետական երեսփոխան մեթր Սերժ Թուրսարգիսեանի և պետական նախարար, երեսփոխան ժան Օղասապեանի տարած յաղթանակներուն, ցնծութեան, ուրախութեան և խանդավառութեան մթնոլորտ մը պարզուեցաւ վերոնշեալ կեդրոններուն մէջ թէ անոնց առջեւ:

Բոլորն ալ գոհունակ էին այն իրողութեան համար, որ ամիսներով տարուած աշխատանքը ի դերեւ չեւաւ, այլ արդիւնաւորութեամբ մեր և 14 Մարտի թեկնածուներուն յաղթանակներով իրենց մրցակիցն երուն դէմ, որոնք կը յօխորտային իրենց կողմէ այսպէս կոչուած «Չխախտիչ յաղթանակներ» տանելու պարծենկոտութեամբ, որոնք, փշրուեցան ժողովրդային ամրակուռ կամքի ապառաժին վրայ, ի շահ Լիբանանին և ի նպատակ ժողովրդավարութեան և ազատութեան:



### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մայիսի 31-ին, ինչպես նաև նախընտրական ժամանակաշրջանում, Հայաստանում կատարուել է անախադէպ ընտրական գեղծարարութիւններ:

Հայաստանաբնակ մեր հայրենակիցների պէս, սփիւռքահայութիւնը նոյնպէս յոյսով էր, որ գոնէ Երեւանի աւագանու օրինական եւ առանց կեղծիքի ընտրութիւնների ապահովումը, կը մեղմացնէր քաղաքական լարուածութիւնը եւ կը ստեղծէր հասարակական համերաշխութեան համար նպաստաւոր մթնոլորտ: Յաւոք սրտի կատարուեց ճիշդ հակառակը, եւ աւելի ուժեղացաւ քաղաքական ու հասարակական լարուածութիւնը եւ անհանդուրժողականութիւնը:

Ընտրական գեղծարարութիւնը հասաւ իր գագաթնակէտին, իշխանութիւնները ամենայն անպատասխանատուութեամբ, մտածելով միայն իրենց նեղ շահերի մասին, ամենամեծ դերն ունեցան քաղաքական եւ հասարակական լարուածութեան եւ անհանդուրժողականութեան սաստկացման գործում: Կոալիցիոն եւ արտակոալիցիոն ուժերը ոչ միայն չընդդիմացան, այլ իրենց պասիւռութեամբ, եւ գեղծարարութեանը ոմանց ուղղակի մասնակցութեամբ, առաւել եւս վտանգուեց Հայաստանի Հանրապետութեան ապագան՝ որպէս կայացած պետականութիւն:

Կատարուեցին բացառապէս լցոնումներ, ահաբեկուեցին դիտորդները, ծեծի ենթարկուեցին լրագրողները եւ այդ բոլորը կարգապահ ուժերի աչքի առջեւ, որոնք շատ դէպքերում նոյնիսկ օգնեցին, որպէսզի անկաշկանդ կատարուեն այդ եւ համանման անհամար ապօրինութիւնները:

Ընտրութիւնների հերթական այս խայտառակութեան ամենամեծ տուժողը եղաւ Հայաստանի Հանրապետութիւնը եւ ժողովրդի այն մասսան, որ պաշքարում է ազատութեան եւ արդարութեան համար: Այս ցաւալի երեւոյթի անմիջական գոհերն են նաեւ ժողովրդի այն հատուածը, որոնք կամայ թէ ակամայ, գիտակցաբար թէ անգիտակցաբար ընտրակաշառքների եւ զանազան զաղտնի ու բացառապէս ճնշումների ներքոյ ստրկաբար գնացին դէպի գոհասեղան՝ գոհելով թէ իրենց եւ թէ իրենց զաւակների ապագան: Իշխանութիւնները լաւագոյնս օգտուեցին նրանցից եւ ստրկամիտ ու միակողմանի իրենց զանգուածային լրատուական միջոցներով շեփոթեցին իրենց յաղթանակը եւ ընտրութիւնները կոչեցին արդարացի, օրինական եւ ժողովրդական:

Նրանց այս գեղծարարութիւնները պարտկեցին Եւրոպական այսպէս կոչուած դիտորդները, որոնք ամենայն անբարոյականութեամբ այս ոչ ընտրութիւնները անուանեցին «Եւրոպական չափանիշներին համապատասխան ընտրութիւններ»:

Մենք Եւրոպայում բնակուող եւ մեր հայրենիքի ճակատագրով մտահոգ հայերս, ամենայն պատասխանատուութեամբ դատապարտում ենք Եւրոպական այս դիտորդների կանխամտածուած ու ցինիկ յայտարարութիւնները, որոնք չեն համապատասխանում իրականութեանը: Նրանք ունեն իրենց շահերը: Եւրամիութեան որեւէ երկրում չի կարող տեղի ունենալ Հայաստանում տեղի ունեցածի մէկ հարիւրերորդն անգամ, եւ պարզ այն պատճառով եւ այն բանի համար որ Եւրոպական հանրութիւնը մի վայրկեան անգամ չի համբերի, որ իշխող կամ ոչ իշխող որեւէ կուսակցութիւն կամ ուժ իրեն թոյլ տա նոյնիսկ մտածել նման գեղծարարութիւնների մասին: Իսկ նման դիտորդները անկասկած կը յայտնուեն դատարանի առջեւ եւ օրէնքի ամենայն խստութեամբ պատասխան կը տան իրենց անպատասխանատու յայտարարութիւնների համար:

Առողջ դատողութիւնը հարց կը տայ, այդ ինչպէ՞ս է, որ Յունիսի 7-ին տեղի ունեցած Եւրոպալաւմենտի ընտրութիւններին ամբողջ Եւրամիութիւնով մէկ տեղի ունեցան միլիոնաւոր մարդկանց մասնակցութեամբ ընտրութիւններ եւ ոչ մի ընտրախախտում, ոչ մի լրագրողի ծեծ, ոչ մի իրաւապահ մարմնի անգամ ներկայութիւն ընտրատեղամասերում չարձանգրուեցին, ոչ մի բողոք չեղաւ ու ամէն ինչ կատարուեց «Եւրոպական չափանիշներին համապատասխան», իսկ միեւնոյն ժամանակ Հայաստանում կատարուած ընտրութիւններին տրուեց միեւնոյն գնահատականը: Այդ հարցերի պատասխանը գիտեն թէ մեր ժողովրդի ճնշող մեծամասնութիւնը եւ թէ մեր իշխանութիւնները:

Այս երկու երեւոյթների ամենամեծ տարբերութիւնը կարելի է արտայայտել հետեւեալ կերպով, որ Եւրոպական հասարակութիւնը, թէկուզ եւ նրա ամենադժգոհ մասը վստահում է իր իշխանութիւններին, իսկ մեզ մօտ ցաւօք, արդարացի թէ ոչ արդարացի, չկայ նման վստահութիւն, չկայ վստահութիւն երաշխաւորող համակարգ եւ դրա միակ պատասխանատուն իշխանութիւններն են՝ իրենց շահամոլութեամբ, ֆեոդալական մտածողութեամբ ու դատողութեամբ:

Հայաստանի իշխանութիւնները պէտք է գիտակցեն, որ միայն դատարկ խօսքերով չէ, որ համերաշխութիւն եւ համագործակցութիւն տեղի կ'ունենայ, այլեւ գործնականում ապացուցել պէտք է: Հայաստանում կատարուածը մեծ ազդեցութիւն է թողնում Սփիւռք-Հայաստան յարաբերութիւնների վրայ եւ գոյութիւն ունեցող ճեղքը առաւել մեծացնում:

Թող որ մատների վրայ հաշուող այսպէս կոչուած հանրաճանաչ ու որոշ բարի համբաւ վայելող մարդկանց անարդարութիւնների հետ համակերպումը, կամ նորելուկ ընդդիմադիր դարձածները

հաւատափոխութիւնը չստեղծի այն թիւր կարծիքը, որ Սփիւռքահայութիւնը հալած իւղի պէս ընդունում կամ ընդունելու է իշխանութիւնների հրամցրածը: Մենք լաւ գիտակցում եւ ճանաչում ենք, ոչ միայն այդ դրդապատճառները, այլ եւ լաւ գիտակցում եւ ճանաչում ենք նաեւ այն ոչ մտաւորական ու այսպէս կոչուած արուեստի այն ներկայացուցիչներին, ովքեր իրենց իսկական միախառնութեամբ կեղծիքի ու անարդարութիւնների կառքին:

Երեւանի աւագանու ընտրութիւնները իշխանութիւնների նկատմամբ ժողովրդի վստահութեան վերականգման ամենալաւ առիթը կարող էր հանդիսանալ, սակայն ցաւօք իշխանութիւնները ձեռքից փախցրին այդ հիանալի առիթն ու հնարաւորութիւնը:

Ֆինանսատեստեսական այս ճգնաժամի պահին Հայաստանի իշխանութիւնները, եթէ իհարկէ մտահոգուած են երկրի ճակատագրով, պէտք է որ աւելի շահագրգռուած լինէին նաեւ սփիւռքի վստահութիւնը ձեռք բերելու առումով, որպէսզի սփիւռքի բոլոր ներուժը եւ հնարաւորութիւնները ուղղորդուէին մայր հայրենիք: Յաւոք իշխանութիւնները իրենց պահուածքով ապացուցեցին, որ Հայաստանի ճակատագիրը, նրա լինել չլինելը, իրենց չի մտահոգում, այլ նրանց խնդիրը, իրենց իշխանութիւնը երկարաձգելն է՝ ամէն գնով:

Մենք կոչ ենք անում Հայաստանի իշխանութիւններին, Հայաստանի կառավարութեանը, ուշքի գալ եւ Հայաստանի պետականութիւնը չգոհել սեփական շահերին, հաստատել կարգ ու կանոն, պաշտպանել ժողովրդի շահերը, իրաւունքն ու արժանապատուութիւնը: Կոչ ենք անում կարգի բերել համակարգն ու վերականգնել օրինականութիւնն ու օրէնքի իշխանութիւնը, վերադառնալ ժողովրդավարական սկզբունքներին ու բուն իմաստին, քանի դեռ ուշ չէ, քանի դեռ երկիրը կարելի է փրկել:

Նախաձեռնող խումբ (Եւրոպա)  
Հայ Ազգային Մշակութային Կենտրոն (Գերմանիա)  
8-Յունիսի 2009 թ.

**Միասին  
Դեպի Նպատակակետ...**

*Բարձր «Կոմիտաս» Կենտրոն*  
**ԳԵՐՇՆ. Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԵՐՏԵՐԵԱՆԻ**  
ԱՌԱՋՆՈՐԴ  
Հայց. Առաքիլական եկեղեցոյ  
Հյուսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի  
*Կազմակերպութեամբ՝*  
**Մայր Տաճարի Հանգանակիչ Ֆանձնախումբին**

**Գեղարուեստական Յայրագիր  
եւ Հիւրասիրութիւն**

*Կազմակերպութեամբ՝*  
«Խաչատրեան Դպրաց Դաս» Երգչախումբին  
*Ղեկավար՝ Բրջ. Սրբեման Սրկ. Կեօզումեան*  
«Արարադ» Երգչախումբին  
*Ղեկավար՝ Արեւոյշ Եղնազար*  
«Իրանահայ Միութեան» Երգչախումբին  
*Ղեկավար՝ Միքայէլ Աւետիսեան*  
Գալիֆորնիոյ Հայ Երիտասարդաց Միութեան  
«Կոմիտաս» Երգչախումբին  
*Ղեկավար՝ Կոմիտաս Քեչեղեան*

Միտով կը հրաւիրենք Ձեզ ներկայ գտնուելու Առաջնորդանիսար Մայր Տաճարի  
շինարարական աշխատանքներու աւարտին փութի աւարտի արարողութեան

Կիրակի, Յունիս 28, 2009-ին, Երեկոյեան ժամը 6:00-ին  
3325 North Glenoaks Blvd., Burbank

Մուտքը Ազատ

\*\*\*\*\*

**TOGETHER  
WE PROGRESS...**

Under the Auspices of  
**HIS EMINENCE ARCHBISHOP HOVNAN DERDERIAN**  
Primate of the Western Diocese of the Armenian Church  
of North America

**The Cathedral Fund Raising Committee**

Cordially invites you to attend the opening ceremony of the completion  
of the first stage of Cathedral Construction

**Cultural Event & Reception**

Sunday, June 28, 2009 at 6:00 p.m.  
3325 North Glenoaks Blvd., Burbank

Free Admission

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր,  
եւ կը ցանկանաք զանոնք նուիրել  
Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝  
հաճեցէք կապ պահել մեզի հետ:

G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104  
Norserount@sbcglobal.net

20 ԿԱՒԱՂԱՆԵՐ

ՈՒՐ ԿԵՐԹԱՆՔ

«Փոխանակ կաթիլ-կաթիլ մեռնելու ու անէանալու, հայր մի անգամ էլ պիտի մեռնի, որ հայր ապրի»:

Փարամագ «Յնչակ» Մայիս 1914

ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱԻԻԹԵԱՆ

Ինչպէս ամէն մէկ անհատ իր կեանքի հանգրուաններու ընթացքին վերատեսութեան կ'ենթարկէ իր անցած ուղին եւ ծրագրեր կը մշակէ գալիքին համար, նոյնպէս պէտք է վարուի մէն մի հաւաքականութիւն ու ազգութիւն, իր մտաւորականութեան, իր ընտրանիին առաջնորդութեամբ:

Վստահաբար այդպիսի վերատեսութեան արդիւնք է Փարամագի վերեւ նշուած խօսքը, որ կու գայ իր «Հայի Պահանջը, յօդուածէն, որու առաջին երկու նախադասութիւններն են «Նորից հիասթափուեց հայը: Նորից յուսախաբութիւնը նրա դարաւոր վշտերի պատմութեան մի օղակը դարձաւ»:

Փարամագի հիասթափութիւնը կը վերաբերէր Պալքանեան պատերազմէն ետք, շրջանի կարգ մը երկիրներու անկախացման ի տես, հայուն շարունակուող ստրկական վիճակին եւ 1908-ի Օսմանեան սահմանադրութեան բերելիք ազատութեան, արդարութեան, հաւասարութեան եւ եղբայրութեան լոգունգներուն հակառակ, հայուն շարունակուող ճնշուած «ուսյա վիճակին» իր ամէն տեսակի զրկանքներով:

Նոյնանման յուսախաբութիւնն է, որ կը պատէ մեզ, աւելի քան տասնամեակէ մը իվեր, ի տես Հայաստանէն ներս տեղի ունեցող խայտառակ ընտրութեանց, մարդկային իրաւանց ոտնահարումներուն եւ դատական զեղծարարութեանց: Նոյնանման յուսախաբութիւնը կը պատէ հայրենի ժողովուրդի մեծամասնութիւնը, որ զրկուած իր ձայնի իրաւունքէն, կը քուէարկէ ոտքով, լքելով հայրենիքը: Մեր աչքերուն առջեւ հայը կը մեռնի կաթիլ առ կաթիլ, բռնելով անհացման ճամբան:

Փարամագի վկայութեամբ, Պիթլիսի թուրք դատարանապետը «օրէնքի հակողը, օրէնք բացատրողը, օրէնքի հայրը», իրեն դիմող բողոքարկու հայուն կ'ըսէր. «Հայերին միայն մտում է պահանջել ու գանգատիլ, իսկ մեր գործն է ու պիտի լինի նրա խնդիրները մերժել ու իրեն էլ հարուածել: Որքանով կը տարբերի այդ մէկը, այսօրուան հայ դատախազի գործելաոճէն:

Փարամագի վկայութեամբ,

«քաղաքական նրբութիւններու գուգորդուած իսլամական կոշտութիւնների հետ եւ համհարզ ընդունած Եւրոպական շահադիտական ներհակութիւնները ծուծն են քամում այն մարտիրոսութեան խաչը շալակած ու Գողգոթայի բարձրունքին կառչած հայութեան»: Որքանով տարբեր է պարագան այսօր:

Իր ապրած հիասթափութեանց որպէս դարման, Փարամագ կ'առաջարկէր. «Հայկական հարցի վճիռը միայն եւ միայն կը վճուէ հայի հաւաքական եւ դրական ուժովը՝ Յեղափոխութեամբ»: Շարունակելով այդ միտքը, ան կ'ըսէր. «Բանականութիւնը գոյութեան իրաւունքը, հրճուանքի եւ վայելքի ձայնը կոչ են անում ժողովրդի երաշխաւորներին ու իրենց հրամայական պահանջը շեշտում. Փոխանակ կաթիլ-կաթիլ մեռնելու եւ անէանալու, հայը մի անգամ էլ պիտի մեռնի, որ հայը ապրի: Ահա հայութեան պահանջը, բխած իրականութեան հրամայականից»:

Շեշտելով այն միտքը, թէ «կրաւորական տենչերով չէ, որ հայը պիտի հասնի իր մարդավայել ապրելակերպին», ան կը մէջբերէր Հետրապեղ Սպենսերի մէկ խօսքը՝ «Յարձակման դէմ դիմադրութիւնը ոչ միայն արդարանալի, այլեւ հարկադրական է»:

Փարամագի ջատագոված յեղափոխութիւնը, առաջին հերթին արդարութեան հաստատման կը ձգտէր, որովհետեւ ըստ իր վկայակոչած Պոլսոյ Իզմիրլեան պատրիարքի թողած աւանդին՝ «հոն, ուր արդարութիւն չկայ, ամէն հաւատարմութիւն կեղծ է»:

Այդ արդարութիւնն էր, որ պիտի ապահովէր «այն դեմոկրատիկ կերպերն ու դրութիւնները, որոնք միայն ընդունակ են երաշխաւորելու մեր կեանքի, կայքի, գոյքի եւ ազգովին ապրելու պայմանները: Վկայակոչելով վանտերվիդի խօսքը՝ «Ապագան պատկանում է այն դասակարգին, որը ինքն է ստեղծում իր հաստատութիւնները», Փարամագ կը յայտնէր իր համոզումը, թէ «Անառարկելի է, որ հայը իր հաստատութիւնները ստեղծելու կենսունակութիւնն ունի: Նրա լեզուն, գրականութիւնը, սէրը դէպի շինարար ձգտումը, Հայրենիքի տենչը, ազգութեան օղակապը... սրանք այն գործօններն են, որոնք, տանջանքով կուռած, արիւնով զօղուած

կազմել են հայի Մեծ Կամբը»:

Այդ համոզումն էր, որ Մեղրիի մէջ ծնած Փարամագին տոգորած էր մասնակից դառնալ վանի ինքնապաշտպանութեանը քաջ գիտակցելով որ հայուն ճակատագիրը մէկ եւ անբաժան է, եւ վանն ու Մեղրին շողկապուած են «ազգութեան օղակապով», հակառակ անոր որ ամէն մէկը տարբեր կայսրութեան տարածքին մէջ կը գտնուէր: Փարամագի մտասեւեուումը կ'ընդգրկէր Հայաստան Աշխարհը, անկախաբար գայն բաժնող միջազգային սահմաններուն: Ու կախողանի պարանն իսկ բաւարար չէր տարհամոզելու գինք, իր կեանքը գոհելու այդ Հայաստանի ազատագրութեան համար:

Այդ նոյն համոզումն էր, որ տասնամեակներ ետք կը մղէր աշխարհի չորս ծագերուն սփռուած հայութեան, օգնութեան ձեռք երկարելու երկրաշարժի

աղէտին ենթարկուած, թէ Արցախեան ազատամարտ մղող հայրենի ժողովուրդին:

Այդ նոյն համոզումն է նաեւ, որ պէտք է մղէ բոլորս Հայաստանէն ներս կերտելու ժողովրդավար ու արդար համակարգ մը: Դժբախտաբար, այն ինչի որ ականատես կ'ըլլանք անցնող աւելի քան տասնամեակէ մը իվեր, ամօթանք կը բերէ աւելի քան չորս հազարամեայ մշակոյթով հպարտացող մեր ժողովուրդին, ջլատելով անոր համոզումը եւ գայն տանելով կաթիլ-կաթիլ մեռնելու եւ անէանալու ճամբով:

Հետեւաբար, Փարամագի կոչը նոյնքան այժմէական է այսօր, որքան երէկ, որպէս զի սթափինք եւ հայի Մեծ Կամբ դրսեւորելով կ'անցնենք անէացման տանող այս գահավէժ ընթացքը, յօդուած մեր ապագան երաշխաւորող արդար ու ժողովրդավար Հայաստանի մը կերտման:

ՊԱՅԱՂԻՏ, 1915, ՅՈՒՆԻՍ 15  
ԳԱՆԻԿ ԱԴԴԱՐԵԱՆ

Կարծես այնտեղ էի ես՝ պայազիտի բարձունքին,  
- Դրապարակ չէր ան, ոչ, այլ բարձունք մը լուսաւոր,  
Կարծես այնտեղ էի ես այդ առաւուս ու լրիւ  
Տեսայ ծագիլն արեւին՝ մինչ դեռ մութ էր ամէն կողմէ:

Դեռ հեռուէն լսեցին քայլերն անոնց երկաթե  
Ժամանակի ժայռին դէմ յաւերժօրէն քանդակուող,  
Ապա տեսայ թէ ինչպէս անոնք, ելան դէպի վեր,  
Դորիզոնին դէմ անբիծ դէմքերն իրենց գծելով:

Կարծես այնտեղ էի ես... Անոնք կանգնած էին մեծ Բանակի մը պէս անյաղթ՝ գրահուած լոկ ոգիով,  
Քսա՞ն էին - ոչ, հազար, անթիւ էին ու կարծես  
Կը բազմամար անընդիստ՝ այդ բանակը գրոհող:

Անպատմելի ժպիտ մը կար շրթներուն դէմ անոնց  
- Ցա՞ւ էր, կարօ՞տ, տառապա՞նք, մնաք բարո՞վ մը վերջին թէ վաղն իր մէջ պարփակող անմեղ երա՞գ մը բոսոր,  
Երազի պէս թեւածող յաղթութեան ե՞րգ մը անգիր:

Եւ այնպէս քննարկում մէջ անոնց

Մահանցի դող չտեսայ,  
Դպարտութիւնը այնտեղ առկայծող բո՞ց էր անշեշ,  
Միայն ոմանց կոպերուն տակ կար արցունք քարացած,  
- Ձախել էին ա՞խ այնքան, ու կեանքը քա՞ղցր էր այնպէս:

Աղջամուղջին մէջ ինձի կախաղաները գուժկան  
Լոյսէ սիւներ թուեցան դէպի երկինք խոյացող,  
Կախաղաններն այդ պահուն երկնքին դէմ ծառացան,  
Դարձան պահանջ հատուցման ու բռնութեան դէմ բողոք:

Կարծես այնտեղ էի ես... Այդ ինչ անլուր հրաշքով  
Արեւն յանկարծ ծագեցաւ, մինչ մթութիւն էր չորս դին,  
- Քսան աստղեր լուծուեցան աստղաբոյլին մէջ Դայոց  
Ճառագայթն որպէսզի ամէն գիշեր վերստին:

Ու ես մինակ, մնացի... Դարձեալ մո՞ւթ էր անթափանց  
Դարձեալ ցաւ ու արիւն՝ ակօսին մէջ մայրիբան  
- Այլ դարերով եւ ընդմիջտ մեր հողին մէջ անթեղուած  
Դատիկներուն հետ ոսկի բուռ մը նոր հունտ կար հիմա:

Պայազիտի բարձունքն էս վաղուան հունձքը տեսայ...

Authorized Agent  
Blue Shield of California  
An Independent Member of the Blue Shield Association  
A.B.A. INSURANCE SERVICES

SERVING SINCE 1975  
BEDROS S. MARONIAN  
(818) 500-9585  
CA LIC. #0494056 • BMaronian@AOL.com  
FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205  
ԵՐԲԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱԹՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



# 20 ԿԱՆԱՂԱՆՆԵՐ

## ԻՆՉՈՐԻ ԶՈՐՈՒԵՑԱՆ ՔՍԱՆՆԵՐԸ

Ստորեւ կը հրատարակենք նորոգ հանգուցեալ ընկ. Տօքթ. Յ. Սաղրեանի՝ 20-ԳերուՆ Գուրուած, Գերկայ շահեկան յօդուածը:

### ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ

#### ՆԱԽԱՐԱՆ

Քսաններու ճակատագրին եւ անոր տուն տուող պատճառները հասկնալու համար, պարտաւորուած ենք յետադարձ ակնարկ մը նետել 19րդ դարու վերջին քառորդին վրայ, երբ ծնունդ կ'առնէր Հայ քաղաքական, համահայկական առաջին կուսակցութիւնը, Ս.Գ. Հնչակեան կուսակցութիւնը, իր իւրաքանչեւ աշխարհայեացքով եւ հայ ժողովուրդի ազատագրութեան անհրաժեշտ յստակ մարտավարութեամբ:

Ի՞նչ վիճակ ունէր հայը այդ օրերուն:

ա. Հայը կազմակերպուած ազգ մըն էր որ կորսնցուցած էր իր ազատութիւնը:

բ. Հայը սկսած էր ազատագրական պայքար մղելու, թրքական դաժան լուծէն ինքզինք թօթափելու համար:

գ. Ս.Գ.Հ.Կ.ը լաւ հասկցած էր որ իթթիհատ կուսակցութիւնը կը հետապնդէր համաթուրանական գաղափարախօսութիւն մը, որուն հիմնական նպատակն էր հայ ժողովուրդին բնաջնջումը:

Այս տուեալներու լոյսին տակ, անվարան կարելի է պնդել որ յեղափոխական գործունէութիւնը, խորքին մէջ, պատմական եւ ընկերային անխուսափելի պահանջք դարձած էր, եւ ոչ թէ պարագայական ուղեգիր մը: Հայ ազգը, իբրեւ երկհազարամեայ պատմութիւն եւ մշակոյթ ունեցող ժողովուրդ, կը հիւժէր օսմանեան բռնակալութեան ներքեւ: Հալածանքները, հարստահարութիւնները, եւ ամէն տեսակի նուաստացումները կը պարտաւորեցնէին հայ ժողովուրդի գարգացած եւ գիտակից երիտասարդութիւնը որդեգրելու ընթացք մը, որ նշանաբան ունեցաւ «Մահ կամ Ազատութիւն» արտայայտութիւնը: Թրքական լուծէն ազատագրուելը ազգային հրամայական մը դարձած էր, ինչ որ ալ ըլլալին անոր համար թափուած գոհողութիւնը եւ վճարուելիք գինը: Մէկ խօսքով, յեղափոխութիւնը ունէր հայ ժողովուրդին համար, պատմաքաղաքական եւ ընկերային, հոգեբանական արդարացում:

#### 1908-1913-Ի ՇՐՋԱՆ

«Ժէօն թիւրքերու», այլ խօսքով իթթիհատականներու սահմանադրութենէն մինչեւ Ս.Գ.Հ.Կ.ի Քէօսթենճէյի մէջ գումարած 7րդ համագումարը, այդ կարճ հինգ տարիները ծանր պիտի կռուէին հայութեան ճակատագրին վրայ: Լուսամիտ ղեկավար, Փարամագի խօսքերը շատ յստակ են:

«Եթէ բոլոր հոսանքները քնանան, հնչակեանութիւնը չի կրնար ուշադիր չհետեւիլ անոնց քայլերուն, եւ ի պահանջել հարկին չպայքարիլ հայութեան եւ թուրքիոյ այլազգի աշխատաւորութեան շահերուն համար»:

Սոյն վերապահութիւնը պիտի արդարանար 1909ի Ատանայի ջարդով, 1911ի իթթիհատի Սեւանիկի

մէջ առած որոշումներով, որոնք կը վերաբերէին հայ եւ այլ փոքրամասնութեանց ճակատագրին, եւ նաեւ Ս.Գ.Հ.Կ.-ի թթիլաֆ ընդդիմադիր կուսակցութեան գործակցութեամբ: Այս բոլորը պիտի յանդէին 1913 թուականի 7րդ համագումարին, Ռուսմանիոյ Քէօսթենճէ քաղաքին մէջ, եւ հոն առնուած որոշումներուն, եւ մասնութեան մը պատճառաւ, ոչ միայն 20ներու կախաղան բարձրացման, այլ նաեւ հայ ժողովուրդի ցեղասպանութեան:

#### ԱՆՀՐԱՔԵՇՏ ԵՉՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ա. Այդ խառնակ եւ անապահով օրերուն, Ս.Գ.Հ.Կ.ը որդեգրեց իրատես, յստակատես քաղաքականութիւն մը, իթթիհատէն ոչ միայն չխաբուելու, այլ գործակցելու ընդդիմադիր «Իթթիլաֆ» կուսակցութեան հետ, պայքարելու համար անգիջող իթթիհատի դէմ: Այս իրատեսութիւնը, այդ օրերէն մինչեւ ներկայ ժամանակները, տիրող գիծը կը հանդիսանայ Ս.Գ.Հ.Կ.ի ազգային-քաղաքական ուղեգիրին:

բ. Ս.Գ.Հ.Կ.ը կոչ կ'ընէր բոլոր փոքրամասնութեանց հետ գործակցութեան, իթթիհատի դէմ իր պայքարի գծով: Այս կը նշանակէր պայքար թէ ներքին եւ թէ արտաքին մարզերէն ներս, հայ դատի թղթածրարի էութեան եւ բացատրութեան միջազգային գետնի վրայ: Յստակ այս ուղեգիրը կը մնայ իր գորու մինչեւ այսօր, երբ մեր առջեւ դրուած է մեր սրբազան դատի հետապնդման համար անհրաժեշտ միասնականութիւնը հայ քաղաքական մտքի ղեկավար շրջանակներէն ներս:

գ. 20ներու մարտիրոսացման յարուցած սկզբունքները անբակտեղիօրէն դրոշմուած են հայ ժողովուրդի հաւաքական գիտակցութեան մէջ եւ կը մնան առյուծտ:

Ահաւասիկ այդ սկզբունքները, որոնք յստակօրէն կը դրսեւորուին կախաղանի վրայ իրենց արտայայտած խօսքերէն.

- Հայ ժողովուրդի չաւերժութեան գաղափարը -

«Մեզ քսաններս կը կախէք, բայց քսան հազարներ պիտի հետեւին մեզի»:

- Ազատութեան գաղափարը

«Հոն ուր կախաղաններ են ճօճում, ազատութիւնն է ման գալիս»:

- Պայքարի գաղափարը -

«Դուք մեր մարմինը միայն կրնաք կախել, իսկ մեր գաղափարը՝ ոչ»:

- Հայրենիքի տեսլականը

«Դուք վաղը Արեւելքի հորիզոնի վրայ պիտի տեսնէք սոցիալիստական Հայաստանը»:

Այսօր, 20ներու յաջորդները, անոնց գաղափարական հետեւորդները ամբօրէն կը մնան կառչած անոնց ժառանգութեան եւ կը մնան հաւատարիմ անոնց տեսլականին, աշխարհի չորս ծագերուն: Մեզի կը մնայ խոնարհիլ իրենց յիշատակին առջեւ եւ ուխտել հետեւիլ իրենց գծած լուսեղէն ճամբէն:

## ՓԱՐԱՄԱԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆԸ

«Քիչ առաջ փոխ-նախագահ Խուրշիտ պէյ սրտաբաց յայտարարութիւններ ըրաւ հոս, եւ ես, որ կեանքիս մէջ լացած չեմ, - նոյնիսկ տասնեակ տարիներով ընտանիքէս հեռու ապրեմ՝ եւ երբ օր մը տուն վերադարձած եմ ու գաւկիս կողմէ չճանչցուելու յուզիչ տեսարանին առջեւ անայլայլ մնացեմ եմ - ինչ մեղքս պահեմ, խորապէս յուզուեցայ Խուրշիտ պէյ մտտը վէրքին վրայ դրաւ՝ ըսելով թէ՛ «Ինչեր չեն կրնար ընել ձեզի պէս խանդավառ մարդիկ, եթէ հասարակաց երջանկութեան իտէպլը ընդհանուր դրօշի մը տակ համադրուէր», - լացի, այո, որովհետեւ այդ քանի մը բառերուն մէջ ճշմարտութեան ճառագայթը փայլեցաւ: Այդ միեւնոյն հարցումը մենք պիտի ընէինք, աւելցնելով թէ՛ ինչ չըրինք՝ մենք այս դժբախտ երկրին երջանկութեան համար: Ինչ անսահման գոհողութիւններու յօժարեցանք, ինչքան եռանդ ու արիւն չսպառեցինք հայ եւ թուրք եղբայրութեան իրականացման համար. ինչպիսի գրկանքներ յանձն չառինք փոխադարձ վստահութեամբ գիրար բարձրացնելու համար: Ու ինչ տեսանք... Ոչ միայն դուք անտարբերութեամբ ամլութեան դատապարտեցիք մեր անագին ջանքերը, այլ՝ գիտակցաբար հետամուտ եղաք մեր բնաջնջումին, մոռնալով որ հայութեան բնաջնջուելը բուն իսկ թուրքիոյ կործանման համագոր է: Դուք քաջալերեցիք ոճիրն ու հարստահարութիւնը եւ լուցնել ջանացիք բողոքող մէն մի արտայայտութիւն: Դուք մեր կենսահիւթով ապրեցաք դարեր շարունակ եւ երբեք չ'ուզեցիք որ այդ հիւթին աղբիւրը իրաւունք ունենայ ապրելու եւ արտադրելու:

Դուք ճնշեցիք մեզ՝ երբ կամազուրկ ըլլաք էինք եւ ողբալի համբերատարութեամբ կը հանդուրժէիք ամէն ստորնացման: Դուք անբեկեցիք մեզ՝ երբ օր մը ուզեցինք թելմաշ գոյութիւն մը խնդրել մեր իշխանաւորներէն: Դուք զայրացաք՝ երբ Արեւելքի մէջ

Արեւմտեան քաղաքակրթութեան սերմեր ուզեցինք անցնել՝ մեր ու ձեր ապագան երաշխաւորելու:

Դուք մեզ ջարդել սկսաք՝ երբ օրին մէկը վճռեցինք մեր արժանապատուութեան համապատասխան դիրքի վրայ բարձրանալ: Դուք մեզ օրէնքի պաշտպանութենէն դուրս ձգեցիք, երբ Միդհատեան պոչատ սահմանադրութեան արտօնած իրաւունքներէն օգտուելու ուզեցինք: Թուրքիոյ բաղկացուցիչ տարրերուն մէջ ամենէն աւելի անձնուէր ու շինարար տարրն եղանք եւ ամենէն աւելի մեզ տուժել տուիք եւ այսօր ալ՝ բռնի եղանակով Անկախ Հայաստանի մը ամբաստանութեան ներքեւ կ'ուզէք դնել մեզ: Իսկ թէ Նուպար Փաշա կամ Սապահ Գիւլեան ինչ կը խորհին արտասահմանի մէջ կամ ինչ կը գրեն, այդ ալ իրենց գիտնալիք բանն է եւ երբեք մեզի չի վերաբերիր:

Հայ է նոյնպէս Արշալիր Սահակեան... ինչպէս նաեւ ձեզի ծառայող շարք մը վսեմաշուքներ՝ նախարարութեանց ու խորհրդարանին մէջ: Այս բոլորն ալ կը գործեն ցերեկ, գիշեր, բայց մեզի չէք վերագրեր անոնց ծառայութիւնները:

Ահ, պարոններ, դատեցէք մարդիկ իրենց գործերով, իրենց աւանդութիւններով՝ իրենց գաղափարական կալուածին մէջ: Ես անջատողական չեմ այս երկրին հանդէպ. ընդհակառակն, ինքն է որ կ'անջատուի ինձմ է, չկարենալով հաշտուիլ գիս ոգեւորող գաղափարներուն հետ: Եւ ես կը ներեմ իրեն, առանց պահանջելու որ ինքն ալ ինձի ներքէ, թէեւ փիլիսոփայ մը իրաւամբ ըսած է թէ՛ «Լաւ է տասը յանցաւորի ներել, քան թէ անմեղ մը դատապարտել...»:

Փարամագի այս պաշտպանողական ճառը, որ ճառ մը ըլլալէ աւելի՝ կտակ մըն էր որ ժառանգ կը ձգէր Հնչակեան կուսակցութեան ապագայ սերունդներուն եւ որուն մէջ կը խտացուէր Հնչակեան սոցիալիզմը, կ'ունկնդրուի ամենախոր լուրթեան մէջ՝ ակնածանքով ու համակրանքով:

**ԳԱՂԱՓԱՐՍ ԶԻ՝ ՄԵՌՆԻՐ**  
**(Գրուած կախաղանի տակ)**  
**ՅՐԱՆԴ ԵԿԱԻԵԱՆ**  
**(20-ճահատակներէն)**

Այս իրիկուն քախիծով ես յուզմունքներս հիւսեցի, Ո՛վ դար գիշեր դառնութեան, հոգեվարքի սեւ գիշեր. Եկուր գինուած վերէն վար արհաւիրքովդ առհեղի, Ծածկելու մարմինս, արդէն կմախք եմ դարձեր:

Ամայութեան ես ընկեր, աղջամուղջիմ պահապան, Գաղափարիմ խնկարկու, սգաւորիմ մխիթար, Այրիմ հետ միշտ լացող ու որբուկիմ հոգածու, Գոգիս տեսնել կ'ուզեմ բիւր ցաւերէն իւր ազատ:

Ես մեծ վերքով խոցոտուած ազատութեան գոհն արի. Մէկ հարուածքով կը մեռնիմ, բայց բռնութեան դէմ ընդվզող իմ հոգիէս թիւ տուող գաղափարս առ յաւիտ, Կ'ուզեմ որ ապրի ազգիս հետ միմ յաղթանակն է փառապանծ:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՀ**  
**ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՉ**  
**(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**  
**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA**  
**ՀԵՌՆԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**

Դուք մեզ քսաններս կը կախէք, բայց իմացէ՛ք քսան հազարներ պիտի հետեւին մեզի:

ՏՕՔԹ. ՊԵՆՆԵ

Տէր Հայր, տուր այս չոր քաշկիմակը մօրս եւ ըստ որ ան երբէք թրջուած չէ արցունքով:

ԵՐՈՒԲԱՆԴ ԹՕՓՈՒՉԵԱՆ



# Massis Weekly

Volume 29, No. 21

Saturday, JUNE 13, 2009

## Parliamentary Elections in Lebanon All Four Candidates Endorsed by SD Hunchakian Party Win by Decisive Votes March 14 Pro-Independence Coalition Retains Majority

BEIRUT -- Lebanon's pro-independence bloc will retain its control of the country's government despite a strong challenge from a Hezbollah-dominated alliance, according to official election results released Monday.

The "March 14" coalition won 71 seats in Lebanon's parliament, while the Hezbollah-dominated "March 8" alliance won the remaining 57 seats, Lebanese Interior Minister Ziad Baroud announced.

Turnout was high among Lebanon's 3 million registered voters during the 12 hours that polls were open Sunday. About 50,000 troops were on the streets, but the run-up to the balloting had been largely free of violence.

There was widespread concern that the Hezbollah-dominated alliance would win control of the government, particularly with the support of Christian opposition leader Gen. Michel Aoun — the only prominent Christian politician to back the March 8 bloc.

As the final official results showed the March 14 Forces won by a clean sweep the districts of Beirut I, Zahle, Batroun, Koura, Bsharreh, Sidon and Tripoli.



Newly elected Armenian Parliamentarians acknowledge their supporters

Celebratory gunfire rattled through Beirut early Monday, fireworks exploded and the champagne flowed after March 14 coalition declared victory. Lebanese waving the national flag and the blue banners of coalition leader Saad Hariri's Future party paraded through the streets of the capital as results emerged from Sunday's closely-fought election.

In Beirut's mainly Christian Achrafieh neighborhood, supporters of Nayla Tueni, who was seeking the seat once occupied by her slain father Gibran, paraded through the streets carrying her on their shoulder.

In the Hadjen district of the capital the mood was also celebratory

Continued on page 3

## Mediators Confirm More Progress in Armenian-Azeri Talks

YEREVAN -- The presidents of Armenia and Azerbaijan overcame some of their remaining disagreements over the unresolved Nagorno-Karabakh conflict, international mediators said on Friday, echoing statements made by the conflicting parties.

գրել կարողալ սորվեցնել չէ Մելգոն-  
եանի առաքելութիւնը. Ի միջի այլոց  
պէտք է իմանաք որ այսօր գիշերօթիկ  
ուսանողներուն իւրաքանչիւրին հա-  
մար տարեկան մօտաւորապէս 10,000.00  
տոլար կը ծախուի. չեմ ուզեր խօսիլ  
գիշերօթիկ երկսեռ վարժարանի մը  
անհատնում դժուարութիւններու մա-  
սին այս դարու պայմաններուն մէջ:  
Իմացէք որ արեւելեան Եւրոպայի  
երկիրներէն եկող 10 աշակերտներու  
համար 100,000.00 տոլար պիտի ծախս-  
ուի ամէն տարի. մինչդեռ այդ գու-  
մարով 10 աշակերտի տեղ 1000 աշա-  
կերտի հայեցի դաստիարակութիւն  
կարելի է տալ, իր ծնած երկրին մէջ,  
իրենց ծնողներու հովանիին ու հակո-  
ղութեան տակ իրենց երկրին ուսում-  
նական ծրագիրներուն ու պահանջ-  
ներուն գոհացում տալով: Ուրախ ենք  
տեղեկացնելու ձեզի թէ Պուլկարիոյ  
մէջ իրականացած է այս ծրագիրը:  
Այսօր Պուլկարիոյ մէջ կան 3 ամէնօր-  
եայ հայկական վարժարաններ, 15-է  
աւելի շաբաթօրեայ դպրոցներ, հայ-  
կական ակումբներ, երիտասարդական  
կեդրոններ եւ ճամբարներ, ու Պուլկա-  
րահայութիւնը արդէն իր գործունէ-  
ութիւններով կ'սպրի հայաշունչ մթնո-  
լորտի մէջ: Զգացումներով պէտք չէ  
առաջնորդուինք, գործնական, տրա-  
մաբանական եւ գիտական տուեալնե-  
րու վրայ հիմնուելով պէտք է ծրագր-

ուին մեր գործունէութիւնները ու  
մանաւանդ հայապահպանումը:

«Կոչ»ին մէջ չիշուած բոլոր  
մտահոգութիւններուն համար, որոնք  
երկար ժամանակներէ ի վեր ազգային  
մտահոգութիւններ են, միայն ՀԲԸ  
Միութիւնը առանձին՝ տարեկան 36  
միլիոն կը յատկացնէ: Մեր Միու-  
թիւնը աշխարհի զանազան գաղութ-  
ներու մէջ ունի 32 վարժարաններ եւ  
նիւթական օժանդակութիւն կը կա-  
տարէ 50 այլ հայկական վարժարան-  
ներու, հայագիտական կեդրոններու,  
որոնք կը հովանաւորուին մեր 3  
կուսակցութիւններու, մշակութային  
կազմակերպութիւններու եւ 3 ազգա-  
պահպանումի սրբազան առաքելու-  
թեան մէջ:

Իսկ այդ ինքնակոչ աղմկարար  
մարդիկը ի՞նչ ըրած են հայապահ-  
պանումի համար:

Այսօր, երբ ՀԲԸ Միութեան  
պատկառելի Կեդրոնական վարչու-  
թիւնը մեր ազգին գերագոյն եւ  
ընդհանրական շահերէն առաջնորդ-  
ուած որոշած է աւելի գործնական ու  
օգտակար եւ արդիական ծրագիրներ  
իրագործել: Ի՞նչ տարօրինակ տրա-  
մաբանութեամբ այս մարդիկը կը  
պտուան թէ «Չէ՛, մենք պիտի որոշենք  
թէ Մելգոնեանը ինչ պէտք է ըլլայ եւ  
ուր, չէ՞ որ մենք շրջանաւարտ եղած  
ենք եւ վայելած վարժարանի բոլոր  
բարիքները ձրիաբար: Չեմ ուզեր  
աւելի երկարել եւ կ'ուզեմ անցնիլ  
յաջորդ կէտին:

Ինչու այս կոչը.  
Ստորագրութիւն հաւաքել որ-  
պէսզի ցոյց տան Կիպրոսի կառավա-  
րութեան որ ժողովուրդին բուն  
փափաքին վրայ վերաբանալ տայ  
վարժարանը Կիպրոսի մէջ: Կարծէք  
թէ երգահանդէս մըն է եղածը. ուր  
երգիչը ժողովուրդին բուն փափա-  
քին վրայ կրկին բեմ կու գայ ու  
կ'երգէ. կամ թատրոն մը որ կը  
կրկնուի:

Պատկառելի Կեդրոնական վար-  
չութեան անդամները, ազգային բա-  
րերարներ են, դպրոցներու, մշակոյ-  
թի եւ երիտասարդական կեդրոննե-  
րու հիմնադիրներ են: Անոնք հեռա-  
տեսա, իմաստուն, զարգացած արհես-  
տավարժ մասնագէտներ են: Մելգոն-  
եան Կրթական Հաստատութեան առա-  
քելութիւնը վերակենդանացնելու, բո-  
ցավառելու եւ անմահ բարերարներու  
երազր յաւերժացնելու համար առած  
են այս որոշումը:

Ինչ կը վերաբերի Կիպրոսի  
բարեխնամ կառավարութեան անոնք  
գիտեն թէ դաստարաններ իրեն յատակ  
վճիռը տուած են բազմիցս: Կիպրոսի  
կառավարութիւնը ձեռնարկուած  
թիւններուն ու քուէներուն պէտք  
չունի. դեմոկրատ կառավարութիւն  
մըն է եւ Եւրոպական Միութեան  
անդամ, անոնք շատ լաւ գիտեն  
օրէնքներն ու կանոնները ինչպէս  
նաեւ իրենց իրաւասութեան սահման-  
ները:

Արդեօք այս մարդիկը կրնա՞ն  
պահ մը լրջանալ ու մտածել թէ ո՞վ  
պիտի ըլլայ շահողը. Կիպրոսի  
կառավարութիւնը, թէ աղմկարար  
անհատները որ կարենան ըսել (իրենց  
երազին մէջ) որ մենք յաջողեցանք  
անմահ բարերարներու երազը՝ Մել-  
գոնեան Կրթական համալիրի իրակա-  
նացումը յետաձգել, եւ կ'ակնկալեն որ  
ծափահարուին իրենց ազգայինս գոր-  
ծին համար: Անոնք կ'արհամարհեն  
մեր ժողովուրդին իմաստութիւնը:

Մելգոնեան անմահ բարերար-  
ներու սկզբնական երազը եղած է

Շաբ.ը էջ 17

**ՄԵԾԱՐԱՆՔԻ  
ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ**  
ի պատիւ  
**Արմէն եւ Միմի Յարութիւնեաններու**

Կազմակերպութեամբ՝  
Հայ Կենսաբանական Մշակութային Միութեան  
Թէրեան Մշակութային Միութեան Լուս Աճեցնողի Մասնաճիւղի  
Մասնակցութեամբ՝  
Ամերիկայի Հայ Գրողներու Միութեան  
Հայկացի Կրթասիրացի Վարժարանի Ծրագրաւորողի Միութեան  
Պիտի Ներկայացուի

**ԱՐՄԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ**  
**«ՆԱՄԱԿՆԵՐ ՊԷՅՐՈՒԹԷՆ Ա»** հասրորդ  
Գիրքը կը ներկայացնէ՝ ՎԱՉԷ ՍԵՄԵՐՃԵԱՆ  
Յարութիւնեան Անոյ Մեկնասար՝ ԵՐՈՒՆԳ ՊԵՊԱՅԵԱՆ  
Հարորէն Ընթերցումներ՝ ԳԷՈՐԳ ՔԷՕՇԿԵՐԵԱՆ  
Համոզնասափար՝ ԹԱԳՈՒՀԻ ԱՐՉՈՒՄԱՆԵԱՆ  
Գնդարտնասարական Յայրագիր

25 ՅՈՒՆԻՍ, 2009, ՀԻՆԿՇԱՐԹԻ ԵՐԵՎԱՆԵԱՆ ԺԱՄԸ 7:30  
ԿԼԵՆՏԵՅԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԳՐԱՐՆ  
222 E. HARVARD AVENUE, GLENDALE  
ՄՈՒՏՔԸ ԱՉԱՏ ՀԻՐԱՅԻՐՈՒԹԻՒՆ

### ԱՐԵՒԻ ՅՈՏԸ... (ՊԱՏՄՈՒԿԵՐ)

**ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ**  
(Շարունակաբար նախորդ էջի վրա)

... Հագիւ էր Հայաստանը փոքր-ինչ հանդարտուել ու անկախ երկիր դարձել, երբ մի նոր աղէտ իջաւ մեր երկրի վրայ, այս անգամ արդէն հիւսիսից: Ռուսական երկաթէ բռունցքը իջաւ հայի գլխին՝ ասել ուզելով. «Վերջ ազատութեանդ, այստե՛ս հետե՛՛ միայն իմ հրամանով»:

Ամէն ինչ պետականացուեց, բացի արհեստագործական փոքր ու միջին արտադրամասերից, որոնք հաշուառման էին ենթարկուած եկամտահարկերի վճարման համար:

Բունիաթեան տղաների աշխատանքի վրայ հսկողութիւն դրուեց: Այսպէս կոչուած «Ֆինբաթին»ը խստագոյնս հսկում էր արհեստանոցի դրամային ելումուտին:

Ընտանիքի եկամուտը զգալիօրէն նուազեց: Լաւ էր, որ Հոռոմսիմի «աշխատավարձը» հաշուառումից դուրս էր: Միայն անհրաժեշտ էր է՛լ աւելի գործ հայթայթել: Հուրիկը շուտով աւարտելու էր դպրոցը եւ նպատակ էր դրել դերասանուհի դառնալ: Սակայն, հիմա անհրաժեշտ էր ամէն մի ազատ վարչկեան օգնել մայրիկին, որը մշտապէս, քափ ու քրտինքի մէջ, օրէօր աւելի էր սկսում լինել:

Տղաների արհեստանոցի գործերը սկսեցին լաւանալ: Պատուիրատուների եւ յաճախորդների պահանջները բաւարարելու համար, հարկ եղաւ առկայ արհեստանոցի մօտակայքում մի նոր տարածք վարձակալել: Վահագի կրտսեր եղբայրները, թէեւ ոչ շատ փորձառու, սկսեցին ինքնուրոյն գործ սկսել այս նոր արհեստանոցում: Կամայ-կամաց գործի յաջողութիւնը նրանց էլ ուղեկցեց:

Վերջապէս եկաւ պահը, երբ գեղեցկուհի Հուրիկը հնարաւորութիւն ստացաւ զբաղուելու իր նախընտրած գործով: Նոր էր աւարտել դպրոցը, երբ Երեւանում հիմնադրուեց թատերական ուսումնարան: Ընդունող յանձնաժողով անդամների համար դժուար է եղաւ համոզուել, որ յանձին այդ գեղադէմ օրիորդի, Հայաստանը մօտիկ ապագայում ունենալու է սքանչելի ձայնով մի դերասանուհի: Բայց, ինչպէս ասում են, ուրիշ բան է կանխագուշակումը, բոլորովին այլ բան՝ իրական կեանքը:

Հուրիկենց տան հարեւանութեամբ, միայնակ, առանց ընտանիքի ապրում էր երիտասարդ կոմունիստ վարդան Յովհաննիսեանը, որ վաղուց էր նկատել գեղեցկուհի Հուրիկին, եւ ուղիներ էր փնտրում նրա հետ հաղորդակցուելու համար:

Վարդանը փախել էր Նախիջեւանից այն օրերին, երբ տասնութ թուականին թրքական զօրքերը ներխուժել են երկրամաս:

Աղասի Խանձեանի դեկավարած մեր երկիրը գրկաբաց ընդունեց նրան: Աւելին, վարդանին յանձնարարուեց կառավարել Երեւանում նոր ստեղծուելիք տրամվայի (հանրակառու) երթեւեկութեան գործը:

Հուրիկին անշուշտ նկատել էր, որ իրեն մշտապէս հետապնդում է Վարդանը: Շատ անգամ նրան տեսնում էր սեւ տուֆ քարից կառուցուած երկայարկանի ուսումնարանի երկրորդ յարկի պատուհանից՝ դիմացի մայթին կանգնած:

Մկան-կառուի խաղը լիչեցնող այս պահուրտուքը երկար չտեւեց: Տղաները եւ մայր Հոռոմսիմը նկատեցին Հուրիկի բնաւորութեան փոփոխութիւնը: Նա դարձել էր աւելի ինքնամփոփ, լուսկեաց, մտածկոտ:

տեղ էին Հուրիկի բնաւորութեան փոփոխութիւնը: Նա դարձել էր աւելի ինքնամփոփ, լուսկեաց, մտածկոտ:

- Հուրիկ ջան, աղջիկս, ինչ որ տարօրինակ բան է կատարուած քեզ հետ, ես քո մայրն եմ եւ պէտք է, որ սիրտդ բաց անես իմ առջեւ, - դիմեց մայրը աղջկան: Միայն ես կարող եմ քեզ օտգակար խորհուրդ տալ: Որքան հասկանում եմ, ինչդրի մէջ տղայի հարց կայ, այդպէ՞ս է, թէ՞ ոչ...  
Հուրիկին ոչինչ չէր մտած անել, քան գլուխը կախել:

- Հը՛, Հուրիկ, խօսիր, ասա՛... եւ մօտաւորապէս կուհու եմ... հօ էն մեր հարեւան, նախիջեւանցի վարդանը քեզ չի նեղացրել:

- Չէ՛, այ՛ մամա, ի՞նչ ես ասում, նա լաւ, բարի տղայ է... վաղուց է ինձ հետեւում: Այսօր էլ ինձ ուսումնարանից տուն ուղեկցեց: Գիտե՞ս, ամուսնութեան առաջարկ էլ արեց:

- Ամա՛ն, յանկարծ եղբայրներդ չիմանան: Աղջիկս, դու դեռ փոքր ես, հագիւ տասնութ տարեկան, քո ի՞նչ ամուսնանալու ժամանակն է, դու դեռ պիտի սովորես, խաղաս, դեռ ինչ բեմեր ես նուաճելու:

Չէ՛, չ'եղաւ: Հուրիկը աւելի լուսկեաց էր դարձել եւ գիշերներն էլ ուշ էր տուն գալիս՝ պատճառաբանելով թէ դասերը շատ են:

Արդէն ժամանակն էր, որպէսզի տղաները խառնուէին գործին.

- Քուր ջան, էս ի՞նչ մութ գործես ես բռնում, - դիմեց աւագ եղբայրը՝ թախտի անկիւնում կուշ եկած Հուրիկին:

- Դէ՛, վահագ ջան, մէջտեղը բան չկայ, - խօսակցութեանը մէջ ընկած Հոռոմսիմը:

- Ո՞նց բան չկայ, այս անգամ կրտսեր եղբայրն էր, - ես եմ աչքովս տեսել, թէ ինչպէս էր մեր քուրը սիրի-բիրի անում էր նախիջեւանցու հետ:

- Օ՛հօ, գործը լրջանում է, - էլի աւագն էր՝ վահանգը, - ուրեմն հարկաւոր է այդ տղայի ականջները քաշել...:

- Ո՛չ, ո՛չ, - յանկարծ տեղից պոռթկաց Հուրիկը, - վարդանը ինձ ոչինչ վատ բան չի ասել, չի արել: Նա սիրում է ինձ, եւ երկար ժամանակ է, որ մենք գիտենք իրարը:

- Իսկ դո՛ւ, դո՛ւ սիրո՞ւմ ես նրան, - խօսակցութեան մէջ մտաւ միջնակ եղբայրը:

Հուրիկը գլուխը կախեց, չգիտէր ինչ պատասխանել: Սպասողական լուսկեան միջից հագիւ լսելի եղաւ Հուրիկի պատասխանը.

- Այ՛ո, մենք սիրում ենք իրար...:

- Ախր, դու դեռ երեխայ ես, քոյրս, - դարձեալ վահանգն էր, - դու պիտի սովորես: Մենք՝ երեք եղբայրներդ եւ մաման՝ ամէն ինչ կ'անենք քեզ համար, չէ՞ որ դու մեր միակ քոյրիկն ես: Դու դեռ պիտի սովորես, մենք ուզում ենք քեզ տեսնել բեմի վրայ:

- Կը տեսնէք, խոստանում եմ: Եւ ինձ այդ գործում կ'օգնի վարդանը: Ճիշդ է, նա ինձ ամուսնութեան առաջարկ է արել եւ ցանկանում է շուտ ամուսնանալ: Ինքը ոչ ոք չունի Երեւանում, միակ միութարանքը ես եմ: Նա իմ ուսմանը չի խանգարի:

Խնդրանք, աղաչանք, պատաղանք, - ոչինչ չ'օգնեց փոխել տալու Հուրիկի որոշումը:

Եւ մի օր, երեկոյեան, վարդանը

նր միայնակ յայտնուեց Բունիաթեան ընտանիքի դրան մօտ: Դուրս բացողը Հոռոմսիմն էր, որին Հուրիկը տեղակ էր պահել վարդանի գալու մասին:

Տղաներն ու Հոռոմսիմը ոչ այնքան բարեհաճ վերաբերմունք ցոյց տուին երիտասարդ վարդանին.

- Այ տղայ, էս ինչի՞ ես մենակ եկել, - վահանգն էր, - ինչ է, հէր-մեր, քոյր-եղբայր չունե՞ս:

- Չէ՛, չունեմ, էդ քո ասածներից ոչ մէկը չկայ, բոլորն էլ գնացել են էն աշխարհ, - ձախ ձեռքը իր հայեացքի հետ վերեւ բարձրացնելով ասաց վարդանը:

Տիրեց խորհրդաւոր լուսկեան: Առաջին խօսքը հնչեց մայր Հոռոմսիմի շուրթերից.

- Տղայ ջան, ախր ըսենք ո՞նց կ'ընի, մենք քեզ չենք ճանաչում, ո՞վ ես, ի՞նչ ես, ինչով ես զբաղուած:

- Եւ, յետոյ, - Հուրիկը դեռ սովորում է, երազներ ունի, ի՞նչ ամուսնութեան մասին է խօսքը, - աւելացրեց վահանգը:

- Կարծեմ վարդան է անունդ, այդպէս չէ՞, ասա տեսնենք, ի՞նչ ես անում, ի՞նչ գործ ես անում, տարիքդ ո՞րքան է, տուն, բնակարան ունե՞ս, չունե՞ս, - դարձեալ վահանգն էր հարցում անողը:

- Այո՛, վարդան է իմ անունը: Ծնողներս վարդան Զօրավարի անունով են կնքել ինձ: Ես, թէեւ քանուկ տարեկան եմ, բայց շատ բան եմ տեսել, շատ փորձութիւնների միջով եմ անցել: Ընտանիքս կորցրել եմ տասնութ թուականին՝ երբ թուրք զօրքերը յարձակուեցին Նախիջեւանի վրայ: Միայն ես եմ ողջ մնացել: Այդ յետոյ էր, որ Անդրանիկը իր զօրքով ջախջախեց թուրքերին:

Երեք տղաների եւ, ի հարկէ, Հոռոմսիմի համար հետաքրքիր էր այդ ամէնին հաղորդակից լինելը, սակայն՝

- Գործ, բան ունե՞ս... - Հոռոմսիմն էր:

- Տո՛ւն, տեղ, - շուտասելուկի նման վրայ տուին մայր ու որդի:

- Վարձու բնակարանում եմ ապրում, սակայն պետութիւնը խոստացել է շուտով բնակարան յատկացնել:

- Իսկ ի՞նչ ես անում, ի՞նչ գործով ես զբաղուած, - իրար հերթ չտալով, գրեթէ միաժամանակ հարցրին մայր ու տղայ:

- Ճիշդն ասած, ես բոլորովին էլ իմ մասնագիտութեամբ չեմ աշխատում: Պարզապէս, որպէս կուսակցական, ես պարտաւորուած եմ անել այն՝ ինչ ինձ կարգադրում են, որտեղ որ ես պէտք եմ: Ես կառավարում եմ Երեւանի նորաստեղծ Տրամվայի վարչութիւնը: Դուք հաւանաբար նկատած կը լինէք, որ ձեր՝ Աստաֆեան փողոցը վերելից ներքեւ, միջնամասով քանդուած է: Շուտով տրամվայի գծեր են անկացուելու:

Որքան էլ անփոր ու անգէտ լինէին տղաներն ու իրենց մայրը, այնուհանդերձ կարելի էր հասկանալ, որ իրենց առջեւ կանգնած է ուսեալ, խելքը գլխին, իսկապէս քիչ թէ շատ աշխարհ տեսած բարետես մի երիտասարդ, որի աչքից չի վրիպել գեղեցկուհի, խոհեմ, համեստ աւնադապահ հայուրի Հուրիկի գոյութիւնը:

- Բայց դու գիտե՞ս, որ մեր քուրը ուսանող ա, դերասանուհի պիտի դառնայ: Որ ամուսնանայ, ո՞նց կարա սովորի, - սա էլ ընտանիքի ամենափոքր անդամն էր՝ Կորիկը:

- Թող սովորի, ո՞վ է իրեն խանգարում: Ես թատրոն շատ եմ սիրում: Իմ պապերը Ագուլիսի շրջանից են, որ մօտ է Գողթան գաւառին: Ես շատ եմ լսել գողթան երգեր:

- Վահագ ջան, դու ես հիմա էս տան մեծը, դու պիտի ասես վերջին խօսքը, դիմեց Հոռոմսիմը աւագ որդուն:

- Սպասէք, սպասէք, մենք հըլա չգիտենք, թէ ինչ է ասելու մեր քուրը: Քուրիկ ջան, երբուանի՞ց գիտես էս տղուն՝ վարդանին: - Ի՛նչ ասեմ..., ես.. ես մի տարի է, որ գիտեմ վարդանին...

- Ուրեմն էդքան ժամանակ էլ հանդիպում էք, այո՞...

- Հա՛՛ հագիւ կարողացաւ պատասխանել Հուրիկը

- Պարզէ՛, ամէն ինչ պարզ է: Մի տարին քիչ ժամանակ չի, բայց ամենակարեւորն այն է, թէ դու սիրո՞ւմ ես վարդանին:

Անմիջապէս չպատասխանեց Հուրիկը: Մէկ-մէկ նայելով բոլորին, փորձելով նրանց սպասողական հայեացքներից կուսակցել, թէ ինչ պատասխան կ'ուզէին լսել, վատհօրէն ասաց.

- Այո՛, - ու դարձեալ տիրեց խորհրդաւոր լուսկեան:

(Շարունակելի 3)

# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)  
\* \$50,00 for USA

\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

# ԱՐՄԵՆ ՀԱՅ, ՔՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏԱՐԵՂԱՐՁՆ Է

## ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ

Տօն է այսօր ցնծութեան, տօն է հայու դիմադրական ոգու փառաբանման, տօն է յաղթական ճակատամարտի, տօն է հայոց աշխարհի վրայ ծիածանացած անկախութեան: Տարին էր 1918 ամիսը Մայիս, գարուն էր հագել հայոց աշխարհը, գարնանային հովիտներն էին եկել համբուրելու ոստաններն հայրենի, հայոց լեռների ձիւնոտ ջուրը երգելով վազում էր դաշտերով, հայ «Լաօ»ների հոգիների տաճարների ստորուշաններում վառում էր իրենց նախնիների պատերազմի աստուած՝ Վահագնի ոգու կրակը: Մայիսին, արեւն իր վարսերով գրկել էր երկիրն հայոց, ծաղկունքով ծիածան կապել հայոց լեռների լանջերին, իր կրակ հուրն էր կախել հայոց սրտերին: Տանըտեղ դարեր առաջ, չորս հարիւր յիսուն մէկ թուականին, դարձեալ Մայիսին, Մամիկոնեանենց Վարդանը, իշխաններն հայոց իրեն գործով, դաշտում Աւարայրի՝ վասն հայրենեաց ու վասն նոր հաւատքի, ճակատամարտ էին մղել հօր տիրակալի դէմ, յաղթանակ, թէկուզ բարոյական: Անցորդները պատմում են, որ իւրաքանչիւր Մայիսին այդ դաշտում նահատակների սրտերից ճառագած սպիտակ շուշաններ էին ժպտում, գիշերները լուսնեակը այցի էր գալիս, համբուրում նրանց եւ իր սպիտակ անուշ դէմքն էր ցօղում նրանց լոյսով:

Դարձեալ Մայիս, հայկական նոր բանակը, կամաւորակն գնդերը վռնտում էին թաթարներին հայոց արեւելեան կողմն աշխարհից, արեւին գրկած կրակ գոյներով դրօշը հայոց, ազատութեան ծիածան էր փռել կապտոտ երկնակամարին: Առաւօտն էր Մայիսի 9-ի արեգակն արդար իր կրակալոյս վարսերով գրկել էր գէնքերը հայոց, յաղթանակի լոյսով վառում սրտերը գինուորների: Գրոհում էին նրանք դէպի բարձունքները իրենց գերավարուած Շուշի քաղաքի, կրակ տեղացին, իրենց սրտերի վրէժի հուրը ժայթքեցին թշնամու վրայ, արեգակի ճառագայթները որպէս նետեր խուրձերով թափեցին նրանց վրայ: Փախաւ թաթարը, դեռ պիտի փախնէր, պիտի հալածէին նրանց շատ հեռուներ, մինչեւ գետն կուր, որի միւս ափից արքան իրենց ագնուազարմ Արտաշէս, Ալլան Սաթենիկի մէջքն օղակելով, հայոց աշխարհին թագուհի էր բերել, սակայն «մեծեր»ը արգելակել էին նրանց յաղթական գինարշաւը, ափսոս:

Աշխարհի պատերազմն էր մոլեգնել Եւրոպա, Արեւելք: Ռուսաց արքայի գործը, գինուոր դարձած հայ շինական կամաւորական գնդերի հետ արշաւում էին դէպի Հայք, Վասպուրական, շտապում էին օժուելու Վանայ՝ Բզնունեաց, ծովի ջրերում, աղօթք մրմնջելու նրա սրտից պայթած բլրակի վայր յառնած տաճարում, նրա քարերի, խաչերի, վշտից քարացած Գագիկ արքայի արցունքները սրբելու: Մհերը Վանի իր ժայռէ դուռը չէ՞ր պատուելու արդեօք, որ դուրս պոռթկար լոյսին եւ արեւը բռնած նետէր թշնամու վրայ: Քաջերի քաջ դիւցազուն փաշան Անդրանիկ, թէ հայոց կուռի Վահագնը, Դիւմանում չախչախեց թուրքի բազմահազարանոց զօրաբանակը եւ յաղթական մուտք գործեց Վան-Տուշպայի դարպասներ: Այնտեղի այգեստանում, հայերը ծաղկազարդ ծառերը որպէս

գէնքեր գրկած, կենաց կուռ էին տալիս թշնամուն: Զինուոր դարձած ռուս շէկլիկ տղաներ, հայ կամաւորների հետ հասան, գրկեցին նրանց, փառաբանեցին նրանց դիմադրութեան ոգին: Արեւմտեան կողմը հայոց աշխարհի լեռներին ու դաշտերին ազատութեան լոյսն էր շողում, Նեմրուժը, Սիփանը, Թոնդրակը բերկրանքի կրակ ժայթքելով բարեւի էին կանգնել նրանց: Հրաբորբ կարմիր արեւոտ լեռներն Վասպուրականի եւ Բզնունների ծովը իրենց ափերի մէջ վեր պահած՝ որպէս նախնիների պաշտամունքի ստորուշան այն մատուցում էին յաղթանակած գործին հայոց:

Սպաննել էին ռուսի արքային, տապալել էին նրա իշխանութիւնը: Իրենց տիրապետութեան յաղթանակի համար գիշում էին տարած քներ, գիշում էին ռուսի գինուորական յաղթանակների փառքը: Արեւմբ նուաճուած երկրներից ռուս գինուորները սուս էին վերադառնում: Փլուել էր Արեւմտեան Հայաստանի ռազմաճակատը, հայերը կազմաւորել էին երկրապահ զօրամաս, հայոց բանակն ու ժողովուրդը առանձին էին դիմազրակելու թշնամուն: Խախտելով «Անդրկովկասի թրքական բանակները արշաւում էին արեւելք, միանալու ցեղակից թաթարներին ու ապա դէպի Արալ, Թուրան, իրենց ցնորածին նոր կայսրութիւնը հիմնելու: Ներխուժել էին Արարատեան դաշտ, Սարդարապատի ու Աբաշ Ապարանի վրայով սպառնում էին գրաւել Երեւանը: Նուաճողները դարձրել Սարդարապատ, Հոկտեմբերեան, սակայն նախագահն հայոց հրամայել էր նորից վառել հայոց աշխարհի իշխանների, դիւցազունների, իմաստունների, հին աստուածների լոյսը եւ այժմ նորից Արամայիս արքան եւ իր քաղաքամայր Արմաւիրն է այն:


Թշնամին հայոց աշխարհի սրտին՝ մայր ոստանին էր սպառ-

նում, ուզում էր բնաջնջել ժողովուրդն հայոց: Գարեգինը Յովսէփեան, մայր տաճարի գանգերը հնչեց, հրամայեց հայոց աշխարհի բոլոր տաճարների գանգերը ղողանջել կուռի կանչելու հայերին բոլոր: Նոր Աւարայր Արաքսի ափերին՝ յանուն ցեղին սրտի գարկերի, յանուն ցեղի սերմին, յանուն յաղթանակի: Վասպուրականի կառավարիչ թէ՛ Արծրունեաց թագաւորութեան նորընծայ արքայ, առասպելական Արամ փաշա, նախախնամութիւնը նրան շնորհել էր Արարատեան դաշտում նաեւ գլխաւորելու հայոց ազատագրական պատերազմը: Զօրքին հայոց կուռի տարան Նազարբէկեան, Սիլիկեան, Փիրումեան գորապետները: Հայոց աւերուած ոստանների՝ Զէյթունի քաջորդիները, Սասնայ ու Մշոյ լեռնականները, Վասպուրականցիները, Յոյն Շնէուրը իր գործով, Ղարաբաղցի Փիրումեան գորավարները՝ իրենց լեռների դիւցազուններով ու մահապարտ գունդով, Արարատեան դաշտի ու Ապարանի գինուոր դարձած շինականները, իրենց գէնքի փառքին հաւատարիմ ռուս սպաներ ու գինուորներ, երկրապահ գործն հայոց, Մայիսի քսան երկուսին գրոհեցին թշնամու վրայ: Ի՞նչ, նրանք գինուորներ՞, չէ, նրանք մրկածին գրոհայիններ էին, որոնք վրէժի կրակ էին ցանում թշնամու սրտերին, Նեմեսիսն էր իջել դաշտ, սրով եկածներին հրով ողջակիցելու: Հին աստուածներ Միհրն ու Վահագն էին իջել հայոց քարէ սրտի՝ Արարատի ստորոտ, արեգակից ու եղէգից յառնած բոցերը նետելու թշնամու վրայ: Ընկրկեցին, պատուեցին թշնամու բազում սրտեր, փախնում էին ով կարող էր: Ափսոս, ինչո՞ւ դադարեցրին յարձակումը, թշնամու հետապնդումը կարող էր հասնէր մինչեւ Կարսի բերդաքաղաք, նրա ամրոցում տօնելու յաղթանակը եւ նրա տաճարում փառաբանելու հին ու նոր աստուածներին: Դու, հայ մարդ, եթէ կարող ես փակել աչքերդ, անէացիր մի պահ այս աշխարհից եւ գինուոր դարձած քեզ տար այդ ճակատամարտի բո-

ցերի մէջ: Պիտի տեսնես Հայր ինչպէս էր գրոհում՝ Արարատին որպէս վահան գրկած, Արագածի վրայ վառուող կանթեղը որպէս աստղ վեր պահած, պիտի տեսնես ինչպէս արեւն էին ցած բերել դաշտի վրայ եւ նրա ճառագայթները այրում թշնամու գէնքներն ու խաւարում աչքերը նրանց: Դու կուռի դաշտում պիտի տեսնես հրամանատար Դանիէլ-Պէկ Փիրումեան նին կարմիր վերարկուով, արեւի ճառագայթները որպէս նիզակ պարզած գործն հայոց գրոհի տանում եւ թուրք գինուորը «Սասնայ է գալիս» կոչելով փախչում, մտիր Պողոս Փիրումեանի մահապարտների գունդ, մահ սփռիր քու առաջ, մենք շատ էինք մահ տեսել: Պիտի տեսնես ինչպէս էին այրում Մայր Արաքսի կամուրջները, ինչպէս էր այն փոթորկել եւ իր ջրերը ճողփող թշնամուն տանում իր յորձանուտը եւ ինչքան քու սիրտը պիտի խայտայ: Պիտի տեսնես ինչպէս էին Զէյթունցիները նժոյգները Զալալ Քուրկիկի նման մուսուլման, ինչպէս էին Սասնայ ու Մշոյ դիւցազները իրենց Դաւթի թուր կեծակին շողում թշնամու վրայ: Պիտի տեսնես ինչպէս էին Յոյն Շնէուրի թնդանութները փլում դիրքերը թշնամու: Մարտի դաշտում պիտի տեսնես թշնամու վրայ սլացող հեծեալ Յովհաննէսին, գինուոր դարձած հայ իմաստուններ՝ Ակսէյին, Ղափանցեանին, Մանանդեանին, Ղարիբեանին, Թոփչեանին: Եւ դու հայ մարդ ինչպիսի հրճուանքով պիտի ակնատեսը լինես թշնամու փախուստին: Եւ այդ օրը Մայիսի քսան ութին գնաց աղօթիք Մայր տաճարում, որտեղ աղօթել էին քու նախնիները արեւին, կրակին, ուժին ու Յիսուսի լոյսին: Գնա մայր ոստան, այրուիր հայերի հրճուանքի բոցերում, բարեւի կանգնիր Վասպուրականի արքայ բոցաշունչ յաղթական գորավարներ՝ Նազարբէկեանին, Սիլիկեանին, Փիրումեաններին:

Պատերազմի դաշտում յաղթա-

Շաք.ը էջ 17



CORDIALLY INVITE YOU TO AN EVENING WITH TWO FAMOUS SCHOLARS


**DOCTOR CENGİZ AKTAR**  
Bağçeşehir University, Istanbul

The Apology Campaign:  
“We apologize to our Armenian brothers and sisters.”  
Why now and what did it accomplish?

&

**PROFESSOR KEVORK BARDAKJIAN**  
University of Michigan, Ann Arbor


“ Hopeful signs, discouraging prospects.”  
A perspective on the thorny road to better Armenian-Turkish relations.



**THURSDAY**  
**JUNE 18, 2009 @ 8:00 PM**

AGBU Manoogian-Demirdjian School  
Agajanian Auditorium  
6844 Oakdale Avenue  
Canoga Park, California

reception will follow  
(free admission)



FOR MORE INFORMATION, CALL 626.794.7942  
or EMAIL AT ASBEDS@AGBUCA.ORG





### ՀՆՉԱԿԵԱՆ 20 ՌԱՅԿԻՐԱՆԵՐՈՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ 94-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

#### Շարունակում է 1-ին

լիազորելու Մեծն Փարամազը, որ իր կազմակերպություններով, իրագործել իր քաղաքականության պարագլուխները պատուհասելու սրբազան որոշումը:

Ափսոս սակայն 20-ներուն ձեռքարկությունը կանխարգիլեց իր քաղաքականության առաջնությունը: Անոնց ձեռքարկությունները կանգ առաւ Քսաննիստ արդար ընկերային վարչակարգ մը կառուցելու կոչումը պայմարը, որ կը ձգտէր հայ, բուրժ, եգիտի, յոյն ու այլ բանուորքէ գիւղացի դասակարգերու կեանքի բարելաւման: Կանգ առաւ ազգային իմնավար հայրենիք մը ունենալու խոյանքը: Եւ վերջապէս, կանգ առաւ հայութեան դէմ նիւթում Ցեղասպանութեան կանխարգիլման գործընթացը:

20-ները, ինքնաբերական քաղաքացիական պայտուժէն ետք, 1915 Ապրիլ 28-ին մինչեւ Մայիսի 14ը, իրրեւ դաւանանքները եւ անջատողականութեամբ ամբաստանելով պիտի գային կանգնելու Օսմանեան Պատերազմական Ատեանին առջեւ, որ -իմէ կատակերգութիւն- նախապէս իր մահուան դատաւիժոր առաւելարդէն: Յունիսի 14-ին, 20-ները կը բարձրանան կախաղան Պոլսոյ Սուլթան Պայագիտ Հրապարակին վրայ:

Յետադարձ ակնարկ մը նետելով 20-ներու դատաւարութեան վերջին նիստի Փոխ-նախագահ Խորշիտ պէյի հետեւեալ այն հաստատումին վրայ, «ինչեւ չէին կրնար ընել ձեռքի պէս խանդավառ մարդիկ (ընդգծումը մեր կողմէ. Ա.Գ.) եթէ հասարակած երջանկութեան իտէլը ընդհանուր դրօշի մը տակ համադրուէր» կը տեսնենք օսմանցի բուրժ դատախազի մը վկայութիւնը, տրուած՝ Փարամազին եւ իր ընկերներուն մարդկային արժանիքներուն կապակցութեամբ:

Վառ, խիզախ, մարդասէր, խորը հայրենասէր, գաղափարասլաց ու համամարդկային սկզբունքներով տոգորուած նուիրեալներ էին անոնք, 20-ները: Նաեւ, հրաշքներ գործելու ատակ արդար ու քաջասիրտ առաջնորդներ: Ափսոս, անոնք մնացին առանձին իրենց ամբողջ պայմարին մէջ: Չ'արձագանգեցին անոնց կոչերուն, զգուշացնելուն, ահազանգներուն: Արդարեւ, պարտաւորուած էին գործելու առանձին: Առանձինն դիմակալելու հայկործան վերահաս աղէտին մը ամբողջ ծանրութիւնը: Մինչդեռ, ազգովին, հաւատարմ, միասնական ու ժերով, միահամուռ՝ ինչ հրաշքներ կարելի չէր իրագործել: Շատեր հաւատացին տիրող իր քաղաքական պետական վարչակարգին կեղծու պատիր խոստումներուն: Անոնք չկարողացան ճշգրիտ գնահատութիւնը կատարել տիրող քաղաքական կացութեան: Եթէ ակնց տրուէր Քսաննիստ պատգամին՝ տարակոյս չի կար. կարելի էր կանխել Ցեղասպանութիւնը: Ափսոս, հազար ափսոս, որ չկարողացան միաբանիլ, գործակցիլ, ուստի կուլ գացին Ցեղասպանութեան:

Նաեւ, 20-ներու իմացական արժանիքները կը կայանային իրենց ազգին հանդէպ ունեցած ուժեղ հաւատքին, գաղափարական հզորութեան եւ մարգարէական յայտնութիւններուն մէջ:

Որքան իրաւացի էր Տֆր. Պէննէ, երբ կը պատգամէր. «Մեզ քսաններս կը կախէ՛ք, բայց քսան հազարներ պիտի հետեւին մեզի»: Այդ 20.000-ները յայտնուեցան Մարտարապատի ռազմադաշտին վրայ եւ ծնունդ տուին հայազգի Առաջին Հանրապետութեան, հայազգի պետականութեան կորուստէն 500 տարիներ ետք:

Նոյնպէս, որքան իրաւացի էր Մեծն Փարամազ, երբ պիտի մարգարէանար իր դահիճներուն երեսն ի վեր պատգամելով. «Դուք վաղը պիտի տեսնէ՛ք Արեւելի հորիզոնին վրայ սոցիալիստական Հայաստանը»: Եւ իրաւամբ, Առաջին Հանրապետութեան հաստատումէն երկու տարի ետք՝ ողջունուեցաւ աւետուած սոցիալիստական Հայաստանը: Նաեւ՝ Փարամազի այն պատգամը, թէ «մեր խաչը Օծեալի խաչէն աւելի ծանրագոյն է, մեր յարթանակները՝ գերագոյնը պիտի ըլլան յարթանակներուն» իրականութիւն պիտի դառնար կոթողումով մերօրեայ Ազատ Անկախ Հայաստանի Հանրապետութեան, ինչ որ ցոյց պիտի տար հնչակեան 20-ներու մարգարէական արտակարգ արժանիքները:

Քսաննիստը, իրենց կեանքները գոհեցին իրենց ժողովուրդին եւ հայրենիքին ազատագրական պայմարի նախապարհին:

Փառքն Պատիւ անոնց խնկելի յիշատակին, իրենց նահատակութեան 94-րդ տարեդարձին առիթով:

### «ԵՍ»-Ը ԵՒ «ՈՉ-ԵՍ»-Ը ԱՐՈՒԵՍՏՈՒՄ

#### Շարունակում է 13-էն

Թիւնը, վեհութիւնն ու աննկունութիւնը: Մարտիրոս Սարեանը պատկերում է հայոց աշխարհի եւ հայ մարդու սիմֆոնիան: Պարոյր Սեւակը գեղագիտական հնարներով արտացոլում է հայ մարդու մշակութային, քաղաքական, ընկերային մաքառումների դէպքի համարողականին ձգտող լաւատեսական ոգին: Յովհաննէս Շիրազը գեղեցիկի օրէնքներով պատկերում է հայու փոթորիկոյ հոգու փարոսների որոնումները: Հրանտ Մաթեոսեանը գեղագիտական մեծ հմտութեամբ եւ մարդասիրական խորը ապրումներով պատկերում է կիսարդիւնաբերականացում եւ քաղաքային յարաբերութիւնների արագօրէն հաստատուող միտումների հետեւանքով հայ գիւղական համայնքի, հայ գիւղի պարզ ու անմիջական մարդկային, գեղեցիկ ասանդոյթների անցանկալի ու վնասակար կորուստը, վերացումը:

Մի պատկերասրահում դիտում էինք մեզ համար անհասկանալի մի կտաւ: Յուցարահի աշխատակիցը իւրաքանչիւր դիրքով կանգնեցրեց մի քանի մարդկանց ու խնդրեց, որ նրանք մօտենան իրար: Կերպարուէց կտաւի պատկերը: Մարդկային կերպարների պատկերը արուեստ մուտք գործեց այլափոխուած: Այդպէս էր տուեալ իրականութիւնը ընկալել չիշեալ նկարիչը: Սարեանը ծառը կապոյտ տեսաւ, իսկ տպաւորչական արուեստում նրա կանաչ տերեւները դարձան գանգուած: Վահրամ Փափագեանը «Օթելլօն» կերպարում է Օսմանեան իշխանութեան դէմ ազատագրական պայքար մղող ժողովուրդների փորձառութեան հարստութեամբ: Մուշեղ Գալշոյեանը եւ նմանները վերածնունդ են իրենց պատկերի ազատագրական պայքարի ոգին ու նրա արդիական իրականացման կամքը: Դերենիկ Դեմիրճեանը իր «Վարդանանք»-ում, գեղեցիկի օրէնքներով հաստատում է այն ճշմարտութիւնը, որ հայ ժողովուրդը իր ժամանակին յաղթականօրէն պայքարել է այն նոյն սկզբունքների ու գաղափարների դէմ, որոնք ծնել ու սնել են Երկրորդ Աշխարհամարտը:

Առարկան արուեստ է մուտք գործում ըստ տուեալ արուեստի լեզուի, խորհրդանշանների, կերպարանաւորման պահանջների: Նկարիչի գիտակցութեան մէջ այն

վերածում է գոյնի, գծի, կոմպոզիցիայի: Երաժշտի մօտ այն դառնում է ձայնային կերպար, գրողի մօտ՝ լեզուական ու ոճական, պարարուեստի մասնագէտի մօտ՝ որոշակի շարժումների, պլաստիկայի յաջորդականութիւն:

Իրաւ ստեղծագործ անհատին բնորոշ է գորաւոր դիտողականութիւնը: Նա ունակ է նկատել «ոչ-ես»-ի այնպիսի կողմեր, երեսներ, յատկութիւններ, նրբութիւններ ու յարաբերութիւններ եւ կապեր, որոնք այնքան էլ մատչելի չեն սովորական անհատների համար: Դա հետեւանք է նրա գիտակցութեան եւ ուշադրութեան ներքին ուղղուածութեան (set, ustanovka): Այս հիման վրայ արուեստագէտը յաճախ կատարում է գիւտեր, յայտնագործութիւններ: Այստեղ գործում է արուեստի իմացական դերակատարումը եւ արուեստն ու գիտութիւնը հաստատում են որոշակի ընդհանրութիւն, շօշափագիծ: Գիտութիւնը ապացուցել է, որ մեր գգայարաններին եւ ուղեղին հասած ոչ բոլոր ազդանշաններն ու գրգռները արձանագրուում են գիտակցութեան մէջ: «Ես»-ի գիտակցութեան մէջ ամրակայուում, ամրագրում է այն, ինչ նրա ներքին ուղղուածութիւնն է թելադրում: Մնացածը պահուում են թափափուկութեան պահեստանոցում եւ այնտեղից դուրս գալիս որոշակի պայմաններում, ստեղծագործական բովում: Այսինքն ստեղծագործ «ես»-ը «ոչ-ես»-ից վերջնուն է այն ինչ թելադրում է իր ներքին ուղղուածութիւնը: Մի ուսուցիչ աշակերտներին խնդրում է նապաստակ նկարել: Նա ցոյց է տալիս կենդանու ականջները, աչքի գոյնը, պոչը, մուշտակի բծերը: Բայց չի նշում նրա պէխերը: Աշակերտների գծագրած նապաստակների մեծամասնութիւնը չունէին պէխեր: Պատահական չէ, որ որոշ հեղինակներ իրենց երկերում պատկերում են կեանքի լոկ բացասական երեսները՝ անկախ իրականութեան խորքային բնոյթից: Նրանք նման են կկուխն, որը բոլոր դէպքերում նոյն տհաճ հոտն է առնում ոչ թէ որովհետեւ այն առկայ է շրջապատում, այլ որովհետեւ այն իր մէջն է, իր վրայ է: Ի տարբերութիւն նրանցից Ուիլիամ Մարոյեանը հիմնականում նկատում է, արտացոլում է բարին, մարդկայինը, լաւատեսականը: Պատահում են երգահաններ, որոնք «բաբիլ» երաժշտութիւն են գրում անկախ երգի իմաստից ու բովանդակութիւնից:

(Շարունակելի)

**ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ**  
Մանօթ երգահան եւ երաժիշտ Տիկ. Անահիտ Սեդրակեան-Խըլոբեան, վերջերս ենթարկուած է անակնկալ գործողութեան մը: Շուտափոյթ եւ կատարեալ առողջութիւն կը մաղթենք սիրուած արուեստագիտուհիին:

INVITATION FOR BIDS (IFB) NO. 1669  
THE REPLACEMENT OF HVAC SYSTEM AT UNION TOWER SENIOR HOUSING BUILDING

The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit bids for the Replacement Of HVAC System At Union Tower Senior Housing Building located at: 455 South Union Ave., Los Angeles, CA 90017. Copies of the IFB may be obtained, at no charge, at the Authority's General Services Department, 2600 Wilshire Boulevard, Suite 3100, Los Angeles, CA 90057, or may be downloaded from the internet at www.hacla.org/constgs Bids will be accepted at the same location until 2:00 p.m. (local time), July 3, 2009.  
6/4, 6/11/09  
CNS-1599612#  
MASSIS WEEKLY

REQUEST FOR PROPOSALS (RFP #7515)  
WORKERS' COMPENSATION THIRD PARTY CLAIMS ADMINISTRATION

The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified Third Party Administrators to administer the Authority's self-insured workers' compensation program. Copy of the RFP may be obtained beginning May 26, 2009 via www.hacla.org/ps website or call (213) 252-5405 or 252-1832. Proposals will be accepted until 2:00 P.M., June 30, 2009.  
6/4, 6/11/09  
CNS-1599663#  
MASSIS WEEKLY

**ՆՈՐ ՄԵՐՈՒՆԴ**  
ՀԵՌՈՒՍԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ  
CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ (ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԸՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԵՍԵՆԹԱ) GLOBACAST SATELLITE  
ՀԻՆԳՇԱՔԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

### ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀՐԱԺԵՇՏ ԸՆԿ. ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆԻ

Շարունակում է 1-էն

Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմնի ընկերներ, գաղութի տարբեր յարանուանութեանց, միութիւններու, կազմակերպութիւններու եւ մամուլի ու մտաւորականութեան ներկայացուցիչներ, ընտանիքի անդամներ եւ բարեկամներ:

Յուզարկաւորութեան տխուր արարողութեանց նախագահեց թեմիս բարեխնամ առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, մասնակցութեամբ նախկին առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի, Հոգ. Տ. Պարետ Մ. Վրդ.ի, Գեղամ Վրդ.ի, Մխիթարեան Միաբանութեան Հայր Օգոստինոսի, Հայ Աւետարանական Համայնքի Վեր. Ժողովի Միաբան եւ հոյլ մը բահանալ հայրերու: Հոգեպարար երգեցողութիւնը կատարեց չնորհալի արուեստագիտուհի Նունէ Գարթալեան, երգեհոնահար՝ Վիկթորիա Միմոնեան:

Հանգուցեալի որդին՝ Յովհաննաս Սաղրեան ամփոփ գիծերու մէջ ներկայացուց Տօքթ. Յ. Սաղրեանի կենսագրականը: Իրենց սրտի խօսքն ուղղեցին նաեւ կրտսեր որդին Դաւիթը եւ թոռնիկը՝ Ալանը:

Ս.Գ.Հ. Հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութեան անունով դամբանական խօսելով՝ ընկ. Գրիգոր Խոտանեան վեր առաւ հանգուցեալի արժանիքները: Յատկապէս վերջին տասնամեակներուն ունեցած օգտաշատ ներդրումը թէ որպէս «Մասիս» շաբաթաթերթի հիմադիր եւ խմբագիր եւ թէ կուսակցական եւ հասարակական տարբեր բնագաւառներու մէջ որպէս աշխույժ գործիչ:

«Եկած ենք վերջին հրաժեշտը տալու եզակի մարդու մը, որ մինչեւ իր վերջին շունչը մնաց ոտքի, մարտի դաշտին վրայ: Տասնամեակներ գործեց՝ յօգուտ իր ազգին, իր շրջապատին ու իր պատկանած կազմակերպութեան, առանց յոգնութեան նշաններ ցոյց տալու ու առանց նահանջելու», - ըսաւ ընկ. Խոտանեան ու շարունակեց. - «Ան թէեւ հասուն տարիքին անդամագրուեցաւ Հնչակեան կուսակցութեան, սակայն անցնող երեսուն տարիներուն եղաւ մեր ամենէն նուիրեալ, ամենէն գործունեայ ու ամենէն հանրաճանաչ անդամներէն մին, մեծ նպաստ բերելով կազմակերպութեան յառաջխաղացքին՝ յատկապէս Լոս Անձեւելըսահայ կեանքէն ներս»:

«Կուսակցութեան քաղաքական դիրքորոշումները յստակ բանաձեւելու եւ հանրութեան ներկայացնելու իր իւրաքանչեւ ոճով, միշտ ալ գրաւեց ունկնդիրներու ուշադրութիւնը: Իր վերջին ճամբորդութիւնը եղաւ դէպի Լիւիզիանա, Ապրիլ 24-ի առթիւ ելոյթ ունենալու Պաթոն Ռուժի փոքրաթիւ հայ գաղութի անդամներու առջեւ: Իրեն համար հանդիսականներու թիւը կարեւոր չէր: Կարեւորը այն էր, որ խումբ մը հայեր հաւաքուած էին նշելու համար մեր նահատակներու տարելիցը»:

«Կեանքի ասպարէզին մէջ ըլլալով հանդերձ յաջողած բժիշկ մը, ան մնաց համեստ, պարզ ու մատչելի բոլորին: Հնչակեան կուսակցութեան մարդկային գաղափարախօսութեան գործադրողը որպէս, Տօքթ. Սաղրեան բարին

իսկական առումով դարձաւ «ժողովուրդի բժիշկը», միշտ պատրաստ օգնելու, բոլոր իրեն դիմողներուն»,- ըսաւ ՄԳՀԿ Կեդրոնական վարչութեան անդամ ընկ. Գրիգոր Խոտանեան:

Պատուելի Գալվին Սաղրեանի մխիթարական խօսքէն եւ օրհնութեան աղօթքէն ետք՝ Առաջնորդ Յովնան Սրբազան դրուատեց հանգուցեալ Տօքթ. Յ. Սաղրեանի բազում երկնային շնորհները: Արդարեւ ան եղած է մեր ազգային եւ մշակութային բազմաթիւ ձեռնարկները քաջալերողն ու ֆինանսաւորողը: Ան իր կեանքը հասցուց բեղմանուր բարձունքի եւ մնաց հաւատաւոր մը իր գաղափարականին եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Ապա Տօքթ. Յ. Սաղրեանի դազաղը փոխադրուեցաւ դէպի ընտանեկան դամբարան իր վերջին հանգստարանը: Այստեղ եկեղեցական կարճ արարողութենէ մը ետք Ս.Գ. Հնչակեան կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմնի ատենապետ Ընկ. Տօքթ. Համբիկ Սարաֆեան իր դամբանականին մէջ առանձնապէս գնահատեց հանգուցեալի նկարագրի մասնաչափով գիծերը: «Հակառակ բարձր պաշտօններու տիրացած ըլլալուն՝ ինքզինք կը համարէր հաւատաւոր զինուոր մը, միշտ պատրաստ հաւատարմօրէն ծառայելու իր պատկանած կազմակերպութեան ու ազգին»:

Պատուելի ձօն (Յովհաննէս) Մելգոնեանի օրհնութեան աղօթքէն ետք «Տուր ձեռք ընկեր» կուսակցական մաղթերով յուզարկաւորները վերջին հրաժեշտը տուին վաստակաբեկ ընկերոջ, յուսուածներու աջբերով հանգուցեալի այրիին՝ Տիկ. Ատրիանին եւ բոլոր հարազատներուն:

#### ՀՈԳԵՃԱՇ Հ.Մ.Մ.Ի ՏԱՆ ՄԷՋ

Յուզարկաւորութենէն ետք տեղի ունեցաւ հոգեճաշ եւ սոգ միթիւնկ Հ.Մ.Մ.Ի տան մէջ:

Հոգ. Տ. Պարետ Մ. Վրդ. երէցեանի կողմէ տեղի ունեցաւ սեղաններու օրհնութիւնը, որմէ ետք սահիկներու ցուցադրութեամբ, ներկաները ծանօթացան հոգելոյս Տօքթ. Յարութիւն Սաղրեանի կեանքէն առնուած կարգ մը յիշատակելի դրուագներուն:

Այնուհետեւ օրուան հանդիսավարը՝ Ընկ. Գաբրիէլ Մոլոյեան դրուատալից խօսքերով պանծացուց մեզմէ յուրեք բաժնուած ընկերոջ ծառայատիրութիւնն ու նուիրուածութիւնը հանդէպ իր ազգին ու գաղափարին:

«Մասիս»ի գլխաւոր խմբագիր ընկ. Տօքթ. Արշակ Գազանձեան իր ելոյթին մէջ շեշտը դրաւ Տօքթ. Յ. Սաղրեանի արժանիքներուն վրայ: Ան՝ բարձր գնահատեց հանգուցեալի ճշդապահութիւնը, համեստութիւնն ու աշխատասիրութիւնը: Որպէս «Մասիս»ի հիմնադիրներէն եւ առաջին խմբագիր ան անվարձատուր կերպով նուիրուեցաւ թէ իր սիրած թերթին, թէ կուսակցութեան եւ թէ գործեց հասարակական տարբեր կազմակերպութիւններուն: Կորուստը մեծ է, եւ ձգած բացը՝ անփոխարինելի... ըսաւ ան:

Տօքթ. Յ. Սաղրեանի մասին իրենց սրտի խօսքն ըսին ու դրուատալից ելոյթներով հանդէս եկան նախկին առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, Նոր Սե-

### ՅԱԻԱԿՑԱԿԱՆ ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆԻ ՄԱՅՈՒԱՆ ԱՌԹԻ

Սաղրեանների ընտանիքին, Յաւով տեղեկացանք ձեր սիրելի Յարութիւն Սաղրեանի մահուան մասին:

Մեծ է Յարութիւն Սաղրեանի աւանդը համայնքային եւ ազգային կեանքում՝ թէ որպէս հրապարակախօս, թէ որպէս «Մասիս» շաբաթաթերթի երկար տարիների խմբագիր:

Ձեր ընտանիքի համար այս ծանր պահին, կիսելով Ձեր խորը վիշտը, յայտնում ենք Լոս Անձեւելու Հայաստանի Հանրապետութեան Գլխաւոր հիւպատոսութեան անձնակազմի անկեղծ ցաւակցութիւնները:

Յարգանքով՝ ԳՐԻԳՈՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ՀԻՒՊԱՏՈՍ

\*\*\*\*\*

Սրտի խորունկ կսկիծով իմացանք՝ անսպասելի մահը, բժիշկ, գրող, ազգային-կուսակցական գործիչ, հրապարակագիր եւ խմբագիր Յարութիւն Սաղրեանի:

Յարութ Սաղրեան եղած է առաջին եւ երկարամեայ խմբագիրը, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան պաշտօնաթերթի՝ «Մասիս» շաբաթաթերթի:

Ան վարած է պատասխանատու կարեւոր պաշտօններ յօգուտ մեր համայնքի եւ մեր ժողովուրդին՝ իր պատկանած կուսակցութենէն ներս, նաեւ ազգային, բարեսիրական եւ եկեղեցական հաստատութիւններու մէջ:

Ան հանդիսացած է անվատ մշակը հայ գիրին, գրականութեան եւ հայ մշակոյթին:

Յարութիւն Սաղրեան երկար տարիներ անդամ եղած է եւ ատենապետ՝ Ամերիկայի Հայ Գրողներու Միութեան:

Վերոյիշեալ բոլոր հիմնարկութեանց եւ կազմակերպութեանց հանդէպ իր ընծայած բազմամեայ ծառայութիւններէն, գատ, ան նաեւ նիւթական շատ մեծ նուիրատուութիւններով նեցուկ կեցած է բոլորին:

Իր մահը խորունկ սուգով կը համակէ բոլորիս սրտերը, անխտիր: Յանուն Ամերիկայի Հայ Գրողներու Միութեան, մեր խորագրաց ցաւակցութիւններ կը յայտնենք հանգուցեալի տիկնոջ, զաւակներուն եւ հարազատներուն:

Նմանապէս, մեր խոր ցաւակցութիւնները Ս.Գ. Հնչակեան կուսակցութեան եւ «Մասիս» թերթի խմբագրութեան:

ԹՈՐԳՈՄ ՓՕՍԹԱՃԵԱՆ, ՆԱԽԱԳԱՇ՝ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ

\*\*\*\*\*

Տօքթ. Յարութիւն Սաղրեանի անակնկալ, վաղահաս կորուստը դառնօրէն կը սզանք վշտահար Տիկ. Ատրիանի, զաւակներուն, բոլոր պարագաներուն եւ ընկերներուն ու բարեկամներուն հետ: Դժուար է, շատ դժուար հաւատալ թէ կեանքով լեցուն, մշտաբխուն եւ կայտառ Տօքթ. Սաղրեանը չկայ:

Ճմարտախոս մտաւորականի եւ ներհուն լրագրողի իր քաղաքական վերլուծումները «Մասիս»ի մէջ կը կարգացուէին հետաքրքրութեամբ եւ հաճոյքով: Իրաւ հայրենասէր իր դաւանած սկզբունքները ան կը պաշտպանէր առանց վարանումի, քաջութեամբ:

Մեր խորագրաց վշտակցութիւնները յայտնելով իր տիկնոջ, զաւակներուն եւ պարագաներուն, կը մաղթենք երկնային մխիթարութիւն:

Հազար յարգանք, խունկ ու աղօթք իր անմար յիշատակին:

ԵՐՈՒԱՆԴ ԵՒ ՌՈԶԻՆ ՊԱՊԱՅԵԱՆ

ըունդ Մշակութային Միութեան ատենապետ Յարութ Տէր Դաւիթեան, Փրոֆ. Օշին Քէշիշեան, «Լարք» Երաժշտական Ընկերակցութեան կողմէ Թագուհի Արզումանեան, Ամերիկայի Հայ Գրողներու Միութեան նախագահ Թորգոմ Փոստաճեան, Իրանահայ Միութեան կողմէ Թոմիկ Ալեքսանեան, Հայ Աւետարանական Համայնքի անուով Չաւէն Խանճեան, Գրիգոր Քէօսէեանի ցաւակցական գրութիւնը կարգաց Մովիկ Քէօրոյլեան: Խօսք առին նաեւ Տօքթ. Գէորգ Քէշիշեան, խմբավար եւ երաժիշտ Հենրիկ Անասեան, Սէսիլ Քէշիշեան, Յովհաննէս Հաննէսեան, Նուպար Մխիթրեան եւ Սթիվ Ռապէնսոն:

Հատուկ ու անձաւորութիւններէ: Հոգեճաշի աւարտին ընտանիքի անունով ելոյթ ունեցաւ հանգուցեալի որդին՝ Յովնաս Սաղրեան եւ շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն եւ բոլոր անոնք որոնք իրենց ելոյթներով մասնակցեցան օրուան սուգին ամոքելով իրենց խոր վիշտը:

Արժանապատիւ Տէր Արշակ Ա. Քհնյ. Խաչատուրեանի սրտի խօսքով եւ «Պահպանիչ» աղօթքով սոգ հաւաքոյթն իր աւարտին հասաւ:

Իր տեսակին մէջ բացառիկ յուշահանդէս մըն էր, որուն նմանը շատ քիչ անգամ տեսնուած է այս գաղութի պատմութեան մէջ:

Լոյս մշտնջենական՝ Յարութիւնի հոգիին եւ յիշատակն անթաւան մնայ իր բոլոր հարազատներուն, ընկերներուն եւ բարեկամներուն մօտ:

Ձեր ճանուցումները Վստահեցեք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 F: (626) 797-6863 massis2@earthlink.net

1785 E. Washington Blvd.  
Pasadena, CA 91104  
(626) 794-7026  
Open Monday—Saturday  
9 am - 8 pm



825 W. Glenoaks Blvd.  
Glendale, CA 91202  
(818) 242-0683  
Open Monday—Saturday  
9 am - 8 pm

<p><b>GREY GOOSE</b> —VODKA— <b>21<sup>99</sup></b></p> 	<p><b>CAZADORES</b> REPOSADO <b>19<sup>99</sup></b></p> 	<p><b>JOHNNIE WALKER</b> BLACK LABEL <b>19<sup>99</sup></b></p> 	<p><b>PATRÓN</b> SILVER <b>29<sup>99</sup></b></p> 	<p><b>Hennessy</b> COGNAC VS <b>22<sup>99</sup></b></p> 
<p><b>RUSSIAN STANDARD</b> VODKA <b>9<sup>99</sup></b></p> 	<p><b>Don Julio</b> 1942 <b>79<sup>99</sup></b></p> 	<p><b>JOHNNIE WALKER</b> BLUE LABEL <b>129<sup>99</sup></b></p> 	<p><b>El Nassaya</b> AUTHENTIC ARAK LEBANON <b>19<sup>99</sup></b></p> 	<p><b>Hennessy</b> COGNAC VSOP <b>33<sup>99</sup></b></p> 
<p><b>IMPERIA</b> VODKA <b>17<sup>99</sup></b></p> 	<p><b>Jose Cuervo</b> TEQUILA ESPECIAL <b>10<sup>99</sup></b></p> 	<p><b>JOHNNIE WALKER</b> GOLD LABEL <b>49<sup>99</sup></b></p> 	<p><b>BACARDI</b> RUM <b>8<sup>99</sup></b></p> 	<p><b>Hennessy</b> COGNAC XO <b>109<sup>99</sup></b></p> 
<p><b>PRAVDA</b> VODKA <b>19<sup>99</sup></b></p> 	<p><b>Crown Royal</b> CANADIAN WHISKY <b>14<sup>99</sup></b></p> 	<p><b>JOHNNIE WALKER</b> RED LABEL <b>15<sup>99</sup></b></p> 	<p><b>Captain Morgan</b> SPICED RUM <b>10<sup>99</sup></b></p> 	<p><b>ABSOLUT</b> VODKA <b>14<sup>99</sup></b></p> 
<p><b>SKYY</b> VODKA <b>8<sup>99</sup></b></p> 	<p><b>JACQUESCARDIN</b> COGNAC VSOP <b>15<sup>99</sup></b></p> 	<p><b>JOHNNIE WALKER</b> GREEN LABEL <b>39<sup>99</sup></b></p> 	<p><b>SMIRNOFF</b> VODKA <b>9<sup>99</sup></b></p> 	<p><b>1800</b> TEQUILA SILVER 100 PROOF <b>17<sup>99</sup></b></p> 
<p><b>CHIVAS REGAL</b> 12 <b>16<sup>99</sup></b></p> 	<p><b>COURVOISIER</b> Cognac VS <b>18<sup>99</sup></b></p> 	<p><b>Dewar's</b> 12 Yr Old Whisky <b>16<sup>99</sup></b></p> 	<p><b>BACARDI</b> RUM <b>15<sup>99</sup></b> 1.75L</p> 	<p><b>PATRÓN</b> XO Cafe <b>17<sup>99</sup></b></p> 
<p><b>Stoli</b> ELIT VODKA <b>44<sup>99</sup></b></p> 	<p><b>ROSKOV</b> VODKA <b>4<sup>99</sup></b></p> 	<p><b>Dewar's</b> 18 Yr Old Whisky <b>44<sup>99</sup></b></p> 	<p><b>Three Olives</b> VODKA BEE <b>17<sup>99</sup></b> 1.75L</p> 	<p><b>roberto cavalli</b> VODKA <b>38<sup>99</sup></b></p> 
<p><b>NOY</b> 5 Yr Armenian Brandy <b>16<sup>99</sup></b></p> 	<p><b>Gantous &amp; Abou Raad</b> Arak <b>11<sup>99</sup></b></p> 	<p><b>TOUMA</b> ARAK <b>12<sup>99</sup></b></p> 	<p><b>Corona</b> Extra 12 PACK <b>11<sup>99</sup></b></p> 	<p><b>Heineken</b> 24 PACK <b>22<sup>99</sup></b></p> 

•Minimum 12 Bottle Mix & Match • This ad expires on 06/21/09 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded  
Prices subject to change without notice • No CCs • All items are 750ml in size unless specified.